այդ հոլովը ընդհանրապես հոլով ձևավորելու պատճառարանվածությամբ:

Ա(ն) հոլովակերտով հանդես է կիզոց ձևերն են՝ կառան, մրգան, պլուան, լիան, տրան, ծրգան, խրքման, աման, ծրման, ինչպես նաև՝ աշնան, կարնան, ախչրգան, կրնգան, էրգան, ծառան:

Տեղանուն նշանակությամբ մի շարք հատուկ անուններ սեռական-արականում ստանում են և հոլովակերտը առանց հոգի՝ կուսավորչա վան, Արշագա գառմանչ, Էրզումա հարս, Վանա ախչիկ, Էրգանա հազոց:

Օշ(ր) — Գրաբարում այս հոլովակերտն (<օշ) էր ստանում միայն կին բառը (նույն հիմքից են՝ տիկին և տանկին): Բարբառներում ընդարձակվում է օշ(ր) հոլովակերտն ստացող բաների ոլորտը: Գրանք իմաստային հատկանիշով բնութագրվող (ազգակցություն ցույց տվող) մի շարք բաներ են՝ բրօշը, ալյօշը, հրօշը, անէրօշը, կէրօշը, կէրօրօշը, փրօշը (կա նաև՝ տիւն), սանկրօշը, տաէրօշը:

Չերթագայական սեռական-տրական — Ա/ա: Եթե զրաբարում ներքին թեթման ա-ն առաջանում է հերթագայական մի քանի տիպերից, ինչպես՝ բ/ա՝ ատամ(բ)ն-ատաման, Շ/ա՝ անուն-անուան, ի/ա՝ աբխն-աբխան, բազմաթիւն-բազմաթիւան, ու/ա-տուն-տան և այլն, սույս բարբառում զործում է միայն մեկ տիպը՝ ու/ա, որն իր ոլորտում ունի զրաբարի ի/ա և ու/ա հերթագայություններով բնութագրվող բաները: ձին> ծուն-ծան, սին> սուն-սան, մարդկութիւն> մարդկութուն-մարդկութան, շուն-չան, սուն-սան:

Ա/օ — Այս հերթագայությունը պատմականորեն հանգում է զրաբարի ալ/ա հերթագայությանը, և դրանք իրար ծածկում են նաև իրենց մեջ ընդգրկող բաների խմբով, որոնք ազգակցություն ցույց տվող հետևյալ բաներն են՝ ախպար-ախպօր, հար-մօր, մար-մօր, սանահար-սանահար, սանամար-սանամօր: Այդ նույն բաներով բազազրված մի քանի ձևեր, որպես զրական, կրոնական փոխառություններ, նախ՝ ուղղականում հանդես են գալիս անհնչյունափոխ հիմքերով, ինչպես՝ ալեհայր. և ապա՝ թեթմուր կատարվում է ոչ թե հերթագայական, այլ մասնիկավոր տիպով, ինչպես՝ ալեհայրին:

Չօգնակի րվում ևս սեռ.-տրակ. բնութագրվում է թեթման մասնիկավոր և հերթագայական տիպերով՝ ի տարբերություն զրաբարում առկա միայն հերթագայական տիպի: Վերջինս բարբառում ունի ստակավանդական արտահայտություն, իրր զրաբարյան է հոգակերտով բաների է/ց հերթագայություն՝ փխխըցիմ-փխխըցօց, Արմէնազէն-Ար-

մէնագլէնց, տրղաւ-տրղոց, մարքիվ-մարբոց, հարտնէ-հորանց, պարօն-պարօնց: Մրանք ավանդութիւն են ոչ միայն իրենց հերթագայութեամբ, այլև ամբողջ բնութեամբ:

Հոգնակի թվում բնորոշը մասնակիավորումն է: Սեռական-տրականում առկա է մեկ հոլովական՝ ու(ն), որը զրվում է -էր, -ներ Հոգնակերանիկով բառերի ուղիղ ձևի վրա՝ փառէրուն, պաղէրուն, էրինէրուն, ախչիգէրուն, օսմունէրուն:

-նի, -երնի, -վընի ստացական Հոգնակերանիկով բառերում -ու(ն) հոլովակերտից ստաց է-ն բնկնում է. տխազնուն, աչփընուն, օղվընուն: Սեռ-տրակ. հոլովով զրված անունները որոշային կիրառութեամբ հանդես են գալիս առանց օրհի՛ ևսաավօրչա վանք. իւրման իրեցզուն՝ աշնան զարմ, զաղզի օր. Յոհարագլա զէրագուր:

Բացառական հոլով: Պարարքի բացառական հոլովի բաղմամբիվ հոգնակերանիկից բարբառում առկա է -լ(ն)-ը, որը երբեմն հանդես է գալիս -մ-ով բաղադրված -մլ(ն) և -մընէ տարրերակերտով է(ն)-ը զրվում է բոլոր բառերի ուղղ.-հայց. հոլովականի վրա. սրղէն, աաշտէն, մարբէն, տարիէն, ժամէն, Արչագէն:

Մէ(ն)-ը և -մընէ-ն հանդես են գալիս անձ ցույց տվող բառերի հետ, ըստ որում -մէ(ն)-ը զրվում է և՛ ուղղական-հայցականի, և՛ սեռական տրականի հիմքի վրա, իսկ մընէ-ն՝ միայն սեռական-տրականի. Արչագ-մէն-Արչագմընէն||Արչագմմընէ, Խալօսմէն||Խալօսմմընէ, արգօսմէն||արգօսմմընէ:

Բացառականը կազմվում է երկու հիմքից՝ ուղղական-հայցականի և սեռական-տրականի: Ի, ու, ա, ան հոլովման տիպերի բառերը կազմվում են ուղղական-հայցականից՝ նըրէն, օսկիէն, աքնէն, առտէն.—օ, օշ, ց հոլովակերանից ստացողները՝ սեռական-տրականից՝ փօրմէն||փօրմմէն, տալօշմէն||տալօշմմէն. Արմէնագլտմէն||Արմէնագլտմմէն: Վա հոլովման բառերինը կազմվում է և՛ ուղղական-հայցականից, և՛ սեռական-տրականից. տարիէն||տարիմմէն, ամխէն||ամխմմէն:

Հոգնակին կազմվում է հոգ. ուղղական-հայցականից. պտտվնէրէն, ունգուգնէրէն, էրէսնէրէն, ծառէրէն:

Փորձիական հոլով: Է՛լ ավելի պարզութեան է հասել գործիական հոլովի կազմութիւնը: Պարարքի վ, ւ, բ, ու, օբ, օվք, ուք, րվ, իւք ցուցիչներին բարբառում կայունացել է օվք-ը (անձ ցույց տվող բառերի զեպքում՝ մով) և՛ եզակի, և՛ հոգնակի թվերում: Այս հոլովի կազմութեան համար ևս հիմք են ծառայում ուղղ.-հայց. և սեռ.-տրակ. հոլովները: Առաջինով գործիական են կազմում ի, ու, ան, ա, վա, երկրորդով՝ օ, օշ, ց

հոլովման բառերը. եագլով, օրով, կիեթով, լավութունով, ծուգով, բայց՝ Խալօսմով, քրօշմով, փուլղոսմով: Օ և օշ հոլովման բառերը կրթման բացառական և գործիական հոլովներ են կազմում ուղղական-հայցականի հիմքից՝ փառէն, փառով:

Հոգնակին կազմվում է հոգնակի ուղղական-հայցականից հոլովակերտի (օվ) հավելումով՝ սրղէրով, աշկէրով, պօխանէրով, մաղնիկէրով:

Կան մի շարք բառաձևեր, որոնք ամբողջութեամբ և հասկապես այս կամ այն հոլովակերտի առկայութեամբ հնարանութիւններ են և կիրառվում են առանձին դարձվածքներում, ինչպես՝ պաղնէց քաս, հարսնէց տուն, մօրձօվ էրիկ, ինչպես նաև՝ սրբուաց, մօրուց, պէրնուց, օսուաց, մէկաց, կարգավ և այլն:

Երզնկան, արեմտյան խմբակցութեան բարբառների նման, շունի ներդրյալանի հատուկ ձև և համապատասխան իմաստն արտահայտում է մյուս հոլովականի շարահայտական տարրեր կիրառութիւններով:

Փոխանցումներ հոլովման տիպերի միջև: Փոխանցումները հիմնականում կատարվում են այլ և ի(ն) տարածված հոլովման տիպերի միջև Ամենից բնորոշը -ի-ով ավարտվող բաղմամբանի բառերի հոլովական զուգանութիւններն են, որոնք զրեթե հավասար բաղմամբ հանդես են գալիս ու(ն) և ի(ն) հոլովակերտներով: Զգալի տարածում ունեն նաև վա(ն) և ու(ն) հոլովման տիպերի փոխանցումները: Մյուս դեպքերը մասնակի արտահայտութիւն են.

- ու(ն)-ի(ն)-կրնուն||կրնիին, էրուն||էրիին, օսկուն||օսկիին
- վա(ն)-ու(ն)-տարվան||տարուն, ամսվան||ամսուն, ժամվան||ժամուն
- ան-ի(ն)-մըգան||մուգին, ժրգան||ժուգին, լէճան||լէճին
- ա-ի(ն)-աան||աունին, շան||շունին
- ի(ն)-ան-ծառին||ծառան
- օշ(ը)-ու(ն)-տիրօշը||տիրուն

Հ ո լ Վ մ ա ն տ ի պ եր ի հ ա Ր ա ց ու յ ց ն ե Ր

Եզակի թիվ

Մ ա ս ն ի կ ա Վ զ Թ ա ի պ

ի(ն) հոլովում	ու(ն) հոլովում	վա(ն) հոլովում
ողղ.-հայց. սիրտ	կըլօխ	տարի
սեռ.-տրակ. սրբգի(ն)	կըլիտու(ն)	տարվան(ն)

Բացառ. սրբղէ(ն) կըլխէ(ն)||կըլօխէ(ն) տարվընէ||տարիէ(ն)
 Քործ. սրբղօվ կըլխօվ||կըլօխօվ տարօվ||տարիօվ

աւն(ը) հոյովում օշ(ը) հոյովում
 ծուկ քուր
 ծրգան(ը) բըբօլ(ը)
 ծուկէ(ն) բըբօլէն||բըբօշէն||
 բըբօշմընէ
 ծուգօվ բուրօվ||բըբօշմօվ

Հ ե Ր Թ ա գ ա յ ա կ ա ն տ ի ս

ա հոյովում օ հոյովում

տուն աղէզութուն մար
 տան(ը) աղէզութան մօր(ը)
 տրնէ(ն)||տունէ(ն) աղէզութունէ(ն) մօրէն||մօրմէն||մօր-
 մընէ
 տրնօվ||տունօվ աղէզութունօվ մարօվ||մօրմօվ

Հագնակի րիվ

Մ ա ս ն ի կ ա վ զ ի ս տ ի ս

սրբղէր կըլօխէր տարինէր ծուգէր տընէր||տունէր
 սրբղէրու(ն) կըլօխէրու(ն) տարինէրու(ն) ծուգէրու(ն) տընէրու(ն)||
 տունէրու(ն)
 սրբղէրէ(ն) կըլօխէրէ(ն) տարինէրէ(ն) ծուգէրէ(ն) տընէրէն
 ||տունէրէ(ն)
 սրբղէրօվ կըլօխէրօվ տարինէրօվ ծուգէրօվ տընէրօվ||
 տունէրօվ

Հ ե Ր Թ ա գ ա յ ա կ ա ն տ ի ս

ց հոյովում

բուրվըղիք Կարօէք
 բուրվըղօց(ը) Կարօէց(ը)
 բուրվըղօմէն||բուրվըղօմընէ Կարօւմէն||Կարօւմընէ
 բուրվըղօմօվ Կարօւմօվ

Հ ո զ ա ո ս ր յ ա ն Բ ե Ր ա կ ա ն կ ա ն կ ա Ր Ե: Բարբառն ու-
 նի որոշյալության, ստացականության և դիմորոշության ենթակարգեր,
 որոնք ձևարանորեն արտահայտվում են ս, ղլտ, ն, ք հոգևրի միջոցով:
 Որոշյալության-անորոշյալ ենթակարգը: Բնութագրում է ն/ը-Շ
 և ն/ը-մը հակադրություններով: Չունի զարարի գ նախդիրով կիրառու-
 թյուններ:

Արտահայտության պլանի ն, ք ցուցիչները հանդես են գալիս որ-
 պես որոշյալության կարգի արտահայտման զիրքային տարբերակներ.
 ն-ն զրվում է ձայնավորահանգ, ր-ն բազմաձայնահանգ բառերի վրա-
 ծին, տրգան, առուն, Կառն, աուր, ճար, մարք, աարգօք, ցըվիբ:

Ը, ն որոշյալ հոգ են ստանում գոյականները և փոխանունները՝
 եզակի և հոգնակի թվերի ուղիղ և թեք ձևերում. այսպար, պրզիզգնէր,
 փաղին, կօծնէ, մվձրուն, իւրէր, տէսանէ, ուղլը:

Որոշյալ հոգ չեն ստանում գործիական հոյովը, վա հոյովման բա-
 ցառականը և սեռական-տրական ու բացատրական հոյովների որոշյալին
 կիրառությունները. Սակով զընձէ: Աղղընէ աղղվ զըմաղէ: Մարի
 ձաղիկ, փաղլ զրբալ:

Անորոշյալ կարգի Շ և մը (<մի) ցուցիչները, որոնք նույնանում
 են զարարի նույն կարգի ցուցիչների հետ, միենույն անփոփոխակի
 ազատ տարբերակներ են. մարք||մարք մը, աուն||աուն մը, տըղա||տը-
 ղա մը:

Մը-ն, որը զարարի նման ունի նտադաս կիրառություն, իր հեր-
 բին հանդես է գալիս մ և մըն զիրքային տարբերակներով: Մը-ն զրվում
 է բազմաձայնով, մ-ն՝ ձայնավորով սկզբող բառերից առաջ, իսկ մըն՝ ան-
 փոխական ստորոգելիական վերադրի վրա՝ հանդույցից առաջ. Մարք մը
 ղլսա: Մարք մվգալ: Մարիզը սղվօր այլիզ մըն է:

Որոշյալության-անորոշյալության հակադրությունը ձևարանական մա-
 կարդակում երբեմն շեղարանում է: Դա տեղի է ունենում այն պատճա-
 րով, որ որոշյալ առման իմաստն արտահայտվում է նաև առանց հոգի.
 Անցան օր ղուսն էգավ զիբօվ:

Ավելի հաճախակի են անձ ցույց տվող գոյականների անհոգ կի-
 րառությունները. Ավաղնէրուն մէշ տըղալ տունդուրազ զըխաղան:

Ինքն>իեմ ղերանունը մեծ մասամբ հոգ չի ստանում. Իեմ իր սա-
 նար մօզգեւ է իր գէցած վանբը:

Որոշյալ աման իմաստով անհող կիրառությունները զրտարար գրականությունն են:

Ստացականության ենթակարգը: Արտահայտվում է ս, տ, ր/ն հոգերով հարթ, տունք, ծանր, փայլ, բազմ, բազմիք:

Գոյականները և փոխանունները ստացական հող ստանում են եղ. և հոգ. թվերի ուղիղ և հոլովված բուրր ձևերում. աշխր, աշխիս, աշխտ, աշխօլբա: Կույականները զուգորդվում են միայն ս հողի հետ. Քուրք, պահուսկ մի՛ քրչկօհիր:

Գերանվան և հողի միջև ին մասնիկը զրվելով՝ տվյալ բան արտահայտում է կրկնակի ստացականություն. Անօր էլիին ձուռքը ձագրե ին, իմինը՝ չի (իմ այգու ծառերը):

Հող. ստացականության իմաստի համար հողերին նախորդում է երի՛ մասումնիս: Հոլովված ձևերի վրա Վերի՛ զրվում է հոլովակերտից հետո՝ աշխօվիս:

Ստացականության իմաստ են արտահայտում նաև ր/ն հողերը: Գրանց ստացականությունը պայմանագրված է ոչ միայն որոշ խմբի բառերի ինչ-որ մեկին պատկանելու, ներքին ստացական իմաստ ունենալու հանգամանքով³⁰, այլև ս, ղ|| ստացական հողերի հետ նրանց հակադրությանը, ինչպես՝ Վախել սիրդը զրփելիքլա (նրա սիրտը): Տրան զրհասդնա, օ զրլսուն խաղ է խախտը իր հարը (իր զրխն): Հավը զըրունցին մէլ զօրթ մը բըռնըր ու զըջնակլ (իր կտուցի): Ալլն՝ Տունքս ծէրէս առին (իմ տունը): Տունըղ ձէրթէղ առին (քո տունը): Տունը ձևըլն առին (նրա տունը):

Հավանաբար, ստացական պետք է դիտել նաև սեռական-տրականի ր/ն-ն, մանավանդ որ վերջինս հանդես է գալիս ստացական անցամի՛ հատկացուցիչի հետ զուգորդունեքում, իսկ որոշիչի ղեկարմ ր/ն չի գործածվում՝ Արչագին ղրգան (հատկացուցիչ), Արչագա գարմունչ (որոշիչ): Նույն հոլովում ինչի որ ու պարագա կիրառություններում հանդես եկող ր/ն-ն, սակայն, որոշիչ հողեր են. Հարցա՛ր Արչագին:

Չարականակն մակարդակում հիշյալ իմաստների համար ր/ն հողի հանդես գալու պայմանները սահմանադրված չեն: Բայց շնորհիվ այն բանի, որ ր/ն-ն, ինչպես նաև ս, դ-ն բազմաթիվ են, դրանք արտահայտում են որոշյալություն, ստացականություն, այլն՝ դիտորշություն, վերջին իմաստի համար դրանք զուգորդվում են դերանունների, կապե-

րի և կապական բառերի հետ. ամմնուս, ինգինքս, վօլբս, մինագրս, փօլթբս, մէք, վրբս, սագր, փօլբ: Վօլբս կիդի (մեղհից ով՛ Լ-ին զմէք): Մինագրղ էցօ՛ (զո՛ւ միայնակ՛ 2-րդ զմէք): Պի գանգրղիմ վրբս (նրանից՛ 3-րդ զմէք):

ԱՄԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Բազմասական աստիճանի կազմությանը բնորոշ է վերլուծական կառուցվածքը, որը ստացել է բառական-բերականակն միջոցի արժեք: Բազմասումը կառարվում է արհա (<թք. dahn) բառ-մասնիկի միջոցով, արհա մէլ, արհա միօվ, արհա ըրդիկ, արհա ձուռ, արհա դիւ:

Սակավ կիրառություն ունի զրտարար բան զ> րը նախորդի միջոցով բազմասականի կազմությունը. Իմ սօմուններ խօջօր ին, րըգ փայրս: Շարահայտական միջոց է, երբ համեմատելի առարկան զրվում է բացասական հոլովով. Իմ շօրվար րու շօրվալն բրդղից է:

Բազմասական աստիճան է հարգական զղկ/զակ ածանցով. խօջօրղկ, մլզղկ, ամուրղկ, ճէղղկ, լավղկ, սվղղկ:

Գերազրական աստիճանը ևս կազմվում է բառական-բերականակն եղանակով: Գրա համար գործածվում է ամն||ամմն գերանվան բացասական հոլովածեր կամ թուրքերեն օն> էն մասնիկը. ամնէն մէն, ամմն կրղղիք, ամնէն պարս, էն կրիք, էն սօն, էն լսակ:

Որական անականին բաղդատականի ու գերազրականի տարբեր աստիճաններ են հարգրղվում նկարագրական ձգանակով, գանալան բանի միջոցով. շառ թու, խիս (<խիսա) պարակ, էլիի շառ, փշ ծառ (<ծանր), պագա ուօօլ:

Հայտարարական անականները կազմվում են այլ խոսքի մասերից ակն և էլ անանցների միջոցով. հօրէնագան, լավան, արղական, վաղկ, արձարէ, օսկէ: Անականը փոխանուն կիրառությանը հոլովվում է ստանալով ի(ն) հոլովակերտը՝ ալվօր, ալվօրեն, ալվօրէն, ալվօրով:

ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Միավորների շարքն է. մկ, էրգու||էրգու, իւէլ, շօս||շօս, հինգ, վկ, օխար, ուր, ինը: Վերջին թվականների ր-ն հանդես է գալիս իբրև արմատական հնչյուն:

Տասնավորների շարքն է. տաս||տասր, քսան, էրսուն, քսասուն, իծուն, վածուն, չլբիչ, սահան, տխսան (վերջին երեք փոխառություններ են):

³⁰ Հմմտ, Ս. Արքամսյան, էջ. աշխ., էջ 125:

Մյուս թվականներից նշելի են՝ հաւուր, հազար, միլիոն:

Տասնավորների և միավորների հարադրումը կատարվում է տասնավորների նախադաս շարագատմայամբ: Տասնավոր թվականը բազադրյալ կազմաձևում նաեղև է գալիս տասը հիմքով. ասանքովի, ասաներգով, ասավերգով, ասաներիբերէ, ասաներչօստ, ասաներուրը, ասաներինք: Տասվերգով, ասավիբէրէ և ների ստացանքում կարելի է բացատրել տասուլերգով, աստուիբէրէ կազմաձևումներից, որոնցում ու-ն ձայնավորներից առաջ օրինակափորեն դարձել է վ²¹: Վ-ն առկա է նաև մյուս տասնավորների և էրգով, իբէրէ թվականների հետ հարադրումներում, ինչպես՝ քառասուներգով, իծնուներէրէ:

Գասական թվականների համար բրբա. գործածում է գրական լեզվի միջոցները՝ -օրօր, -օրր, -լօրօր սածանցներով կազմաձևումները. լերգօր, լերօր, շօրօր, հինգերօր:

Բաշխական թվականները կազմվում են՝ ա) բացարձակ թվականների կրիտոմիայամբ՝ մլչ-մլի, էրգ-երգով, իբէ-իբէրէ, տաս-տաս. ք) բացարձակներից -ազան (սածանցի հավելումով՝ մլչազան, էրգուրազան, քառասնազան:

Թվականը նա հոլովվում է միայն փոխանուն կիրառումիցամբ՝ պատկանելով ի հոլովմանը Բացառություն է կազմում միայն մէկ թվականը, որը անձնանիշ կիրառումիցամբ սեռական-տրականում ստանում է ու(ն), իսկ իրանիշի զեպքում՝ ի/ն. Մէզում հարցուցի: Ա՛ս քարին մի՛ գա՛րգ, ա՛ն մէկին գա՛րգ:

ԳԻՐԱՆՈՒՄ

Գ Ե մ մ Ի կ ա ր գ ը — Առկա է Լերք դեմք՝ 1-ին, 2-րդ, 3-րդ՝ (ասասան): Հասակաշահան է, որ մի շարք գերանուններ զմեզի գաղափար են արտահայտում հոգրի միջոցով՝ վօվրս, անմէրս, փօլօր:

Որոշ գերանուններ ընդհանրապես չեզոք են գիմային իմաստի ներկատմամբ: Գրանք հիմնականում հարցական-հարաբերական գերանուններ են՝ իշխան, սու, լիլի, վօրհան և այլն:

Թ վ ի կ ա ր գ ը — Հոգնակիի կազմության մեջ ավանդական արտահայտությունն ունեն կս-մէրէ, սուս-սուր գերանունները ուղիղ և թեք ձևերում (վերջիններին էլ ոչ լրիվ հարադրույցը), մյուս գերանուններն

իրենց -օնէ, -էր, -նէր անվանական հոգնակներում (սրվօնք. ինչք, քանիներ) նորակազմություններ են:

Որոշ գերանուններ՝ նաեղև են գալիս կամ որպէս անհոգնականներ (գրանք հիմնականում ոչ առարկա մատանաշող ցուցական գերանուններ են՝ ասանցլքասեգ..., սայափլքաշափ..., քոզըղէ..., հօս...), մի կտում հարցական-հարաբերական, որոշյալ, անորոշ և ժխտական գերանուններ), կամ որպէս անհոգնականներ, թեև սրանք չունեն հոգնակի ցուցիչներ (գրանք են՝ անմէր, իբար):

Գրարարի համեմատ մեծ է անհոգնական գերանունների թիվը: Հ ի յ յ վ ի կ ա ր գ ը և հ ո յ յ վ մ ա ն ի Խ Յ Ե Բ Ը — Ունի երկու տիպի հոլովում՝ զուտ գերանվանական, կրք գերանվան ուղիղ և թեք ձևերը նաեղև են գալիս տարբերմաներով՝ էս, իմ, ինձ ինձի ինձի, իս իլիս, տուն, քու, էլզ իլզ իլ իլզի, և որոշ հոլովումը չի կատարվում հոլովական վերջավորությունների միջոցով, և անվանական, երբ գերանուններն ստանում են գոյականների հասուկ հոլովակերտներ՝ քանի-քանի/ն-քանի/ն-քանի/ն:

Ի տարբերություն գրարարի, բարբառում չկան ամբողջ հարացույցներով հակադրվող գերանվանական և անվանական հոլովումներ. գրանք ասանձանում են միայն հարացույցների մի մասով, այսինքն՝ գերանունը մի քանի հոլովաձևերում (ստղծարբար մինչև հայցականը) ունի գերանվանական հոլովում, իսկ որոշ ձևեր (հատկապես բացառականը և գործիականը) ստանում են անվանական հոլովակերտներ:

Հոլովման հարացույցում նման հակադրություն են նաեղև բերում 1-ին և 2-րդ դեմքի անձնական գերանունները եզ. և հոգ. թվերում, 3-րդ դեմքի անձնական և ցուցական գերանունները եզ. թվում:

Մյուս գերանունների եզ. և հոգ. թվերի հոլովումը կատարվում է անվանական հիմունքներով (անօնէ, սրվօնէ, ինչ, քանիներ, իքառն): Այս զեպքում զուգականների նման գերանուններն ունեն շրտ հոլովաձև և եզ. թվի սեռական-արականում ստանում են ի, ու, հոգ. թվում՝ ու, ց հոլովական թեքումներ:

Գերանվանական և անվանական հոլովումների սահմանների խախտումը՝ հօդուտ անվանական հոլովման տիպի ընդարձակման, արտահայտություն է հոլովման համակարգի միասնականացման և պարզեցման:

Գերանունների ձևարանական անմիատարրությունը երևում է ոչ միայն թվի ու դեմքի, այլև հոլովի կարգում. որոշ գերանուններ հոլովման հարացույցներ չեն կազմում: Գրանք հիմնականում այն գերանուն-

31 2. Անտայան այդ ձևերի վ-ն համարում է ևս շաղկապի կրճատում (տե՛ս Քննություն պղպաճայ բարբառի, էջ 105):

Եներն են, որոնք չեզոք են նաև թվի և դեմքի կարգերի նկատմամբ: Որոշ զերանուններ էլ ունեն թերի հոլովում, ինչպես առ-բ, որը ունի միայն բացառական՝ ուրզ:

Գերանունների, ինչպես նաև անձանունների և անձ ցույց տվող բառերի գործիական հոլովածևով կիրառություններ բարբառին բնորոշ չեն:

Գերանունների տեսակներ և նրանց հոլովման հարաջույցներ— Կան զերանունների անձնական, ցուցական, որոշյալ, անորոշ, հարցական-հարաբերական, ժխտական և փոխադարձ տեսակները: Անձնաբանական զերանուններին իմաստն արտահայտվում է նկարագրական եղանակով, անվան և ալ>ա(է) շղկապի հարադրությամբ՝ ավնըն ա (ամենբով, ամենն էլ):

Ա և ձ և կ և ն զերանուններն են՝ էս, տուն, ան||ըն, ինք-մէնք, առվ, անօճ||ընօճ, իւրէնք:

Եզ. թվի 1-ին դեմքը ճիշտ նույնն է զբարբի հետ՝ էս<ես. 2-րդ դեմքի ն-ի հավելումը՝ դու>առն, բացատրվում է ան զերանվան համարանությամբ: Սնտականը և տրականը ես նույնն են զբարբի հետ. իմ, ինձ և ու, էլզ: Ինձ և էլզ զերանունները հաճախ հանդես են գալիս ի հավելվածով՝ ինձի (նաև ընձի) և էլզի||բզի, որը անվանական ի հոլովման ազդեցություն է: Բարբառի համար անսովոր հնչյունափոխությամբ (ն|ը) բզզ, բզզի ձևերը չունեն լայն տարածում:

1-ին դեմքի հայցականը բարբառում ունի զիս, իս, ինձ||ինձի||ընձի տարբերակները: Հնագույնը զբարբի հետ նույնացող զիս ձևն է, որը սակայն ունի քիչ զորածություն: Մյուս կրկուսը՝ իս և ինձ||ինձի||ընձի (առաջացած գրական հայերենի ու այլ բարբառների հետ ընդհանրանալու ձգտմամբ) ունեն զորածության հավասար բաշխում:

2-րդ դեմքի նզ. հայցականը զբարբից տարբերվում է զ նախազբի բացակայությամբ՝ զնեզ>էլզ: Սրա տարբերակներն են՝ էլզի, բզզ, բզզի:

Երկու դեմքերն էլ բացառական հոլովում ունեն երեք տարբերակ՝ ինէ, իզմէ, իմմբնէ և էնէ, էլզմէ, ֆումբնէ: Ինէ և էլնէ ձևերը զբարբայան յինէն և ի էլնէ ձևերի անմիջական շարունակությունն են. նախ՝ դուրս է մղվել առաջին դեմքի վերջին ն-ն՝ զիավելով իբրև հոգ³², որով զերանվանը տրվել է գոյականների բացառական հոլովի կեղտաբանք՝ յինէն>յինէ: Սրա նմանողությամբ և դարձյալ անվանական հոլովմանը

անակզիու ձգտմամբ է է ավելացել ի էլնէ ձևին՝ ի էլնէ, որից հետո ընկել են յ, ի նախդրները՝ յինէ>իէ, ի էլնէ>էլնէ:

Իմմբնէ և ֆումբնէ տարբերակներն ունեն անվանական հոլովման կառույց՝ սեռականի հիմք+մբնէ (ինչպես՝ Արշազնմբնէ, աղբումբնէ): մբնէ մասնիկը ամենայն հավանակառնությամբ կապ ունի զբարբի մի շարք զերանվանական ձևերի բացառական հոլովում հանդես կելզ վերջավորության հետ՝ յիմմմնէ, յումմմնէ, ի սմմնէ, ի զմմնէ, յայմմնէ, յայնմմնէ և այլն³³: Այդ վերջավորություններից միջին վանկի ձայնավորի (ա) օրինակով հնչյունափոխությամբ առաջացած մբնէ-ն բարբայի է իբրև անկախ ձևույթ և զերանունների բացառական հոլովից սկսել է տարածվել նաև անվանական հոլովման համակարգում՝ կայունանալով անձանունների և անձ ցույց տվող գոյականների ոլորտում:

Իզմէ և էլզմէ ձևերն առաջացել են հետևյալ անցումով: Դարձյալ անվանական հոլովման հետ ընդհանրանալու միտումով էս և տուն զերանուններից բացառական է կազմվել տրականի հիմքից՝ անձանանիչ բառերի հոլովմանը հատուկ բացառականի մէ ձևույթի հավելումով՝ ինձ+մէ: Քանի որ բարբառում ն-ի համար բացառված է նրկու բաղաձայնների նախորդող դիրքը (ավյալ դեպքում ն-ն նմ-ից առաջ), ուստի ն-ն ընկել է, իսկ ձ-ն ուղայինների մոտ, բոս բարբառում զորոշ օրինակափոխության, կորցրել է պայթական բաղադրիչը՝ հանդես գալով չփական տարրով՝ ինձմէ>ինձմէ>իզմէ:

Երկրորդ դեմքում, պարզապես, տրականի հիմքին ավելացել է մէ՝ էլզ+մէ:

էս և տուն զերանունների գործիականը լրիվ հեռացած է զբարբի ինէ և էն ձևերից և բացառականի հետևողությամբ ունի անվանական հոլովման կազմություն, այն է՝ առկանի հիմք+մով. ինձ+մով-ինձ-մով>ինձմով>իզմով և էլզմով:

Հոգնակի թվում ես 1-ին և 2-րդ դեմքի զերանունները լինելով նույնը զբարբի հետ՝ հանդես են բերում միայն ավանդական և բարբառին հատուկ հնչյունափոխություններ. մեք>մէնք, դուք>առնք: Դրանք զբարբի հետ նույնանում են նաև սեռական, տրական և հայցական հոլովածներում. վերջինում բացակայում է զ նախդիրը, մէք, մէլզ||մէլզի, մէք, ծէլզ||ծէլզի:

Բացառական և հատկապես գործիական հոլովիցը հեռացած են զբարբի ձևերից և հետևում են անվանական հոլովման կազմությանը,

32 Ա. Անտոյան, էջվ. աշխ., 4, 2, էջ 74:

33 Գ. Տեր-Վարդանյան, էջվ. աշխ., էջ 39:

ինչպես այդ տեղի էր ունենում եզ. թվում. բացառականը՝ մեզմէ, մերմբնէ, մեզմէ, մերմբնէ, գործիականը՝ մեզմով-մեզմով:

Բացառականի հոգ. ունի նաև մեկէ, մեկէ հնագույն ձևեր, որոնք կապվում են գրաբարի ի մէջը, ի ձեռք ձևերի հետ, որոնցից մէկէ, մեկէ-ի առաջումը նույն ընթացքով է կատարվել, ինչպես յիճնէ, ի փնէ ձևերից ինէ, փնէ ձևերն են առաջացել, այսինքն՝ ի մէջը>ի մէն>ի մէնէ>մէնէ, ի ձեռք>ի ձեռք>ի ձեռնէ>ձեռնէ:

3-րդ դեմքի եզ. թվի համար գործածվում է ցուցական դերանունը՝ այն>ան, որը բարբառում բազմիմաստ է. այն կ' անձնանիչ է, կ' րանիչ: Ան-ը հանդես է գալիս նաև ըն տարբերակով: Հոգնակին ևս շեղված է գրաբարյան ձևից և ունի զուտ անվանական կազմով յուն. կզակիի հիմքից -օնէ հոգնակերտի միջոցով կազմվել է անօնէ||բնօնէ և երվօնէ ձևերը: Ընդհանրապես 3-րդ դեմքում ակնհայտ է անվանական հոլովման ազդեցությունը. նախ՝ ամբողջ հոգ. թվին ունի անվանական հոլովում՝ անօնէ-անօնց-անօնվէ-անօնով (ինչպես՝ պարօնէ-պարօնց-պարօնվէ-պարօնով): Ազդեցությունը որոշակի է նաև հոլովների ձևադերսի գրանցումն մեջ, որի քանակը չորսն է, ի տարբերություն մյուս դերանունների, որոնք ունեն հինգ, երեմն նաև վեց հոլովական ձևավորում: Այնուհետև, 3-րդ դեմքի դերանվան հայցականը անձի առումն ուղիղ խնդրի կիրառություններում շատ հաճախ նմանվում է ուղղակիանին՝ ինչպես անունների դեպքում: ի տարբերություն մյուս դեմքերի դերանունների: Այսպես՝ ծրեօխբ գազօրին, օ սուրվը իրենց միևնույնիստ սոխչուրուն զա ու փէնիլիմանի մը շափ ուծով անէ ան (փոխանակ՝ անօր): Մյուս դեմքերը հիշյալ կիրառություններում կլինեն՝ ուծով անէ խ, փէզ, բայց ոչ երբքք՝ ուծով անէ էս, ասէ:

Այս նշանակում է, որ անձնական դերանուններից առաջին բայլը դերանվանական հոլովմից ղեկի անվանական հոլովում կատարել է 3-րդ դեմքի դերանունը, որին հետևել են մյուս դեմքի դերանունները որոշ հոլովաձևերում (հատկապես բացառականում և գործիականում):

Ան||բն դերանվան սեռականն է անօր||բնօր, որը կարելի է բխցնել գրաբարի այն դերանվան սեռականի երկար ձևից՝ այնուրիկ-ից իկ-ի անկումով: Որպես անվանական հոլովմանը հետևող դերանուն՝ սեռականի ձևն ունի նաև տրականը: Հայցականը ունի ան||բն և անօր||բնօր զուգաձևերը:

Բացառական հոլովն ունի անգէ||բնգէ, անգէց||բնգէց, անօրմէ||բնօրմէ, անօրմբնէ||բնօրմբնէ տարբերակները՝ բոլորն էլ հեռացած գրաբարի յայնմ, յայնմանէ ձևերից: Վերաբերյալ տարբերակներից հնագույ-

նը, կարծում ենք, անգէ ձևն է, որը հնարավոր է բխցնել գրաբարի այն դերանվան այնմիկ ձևից, մի-ի անկումով՝ այնմիկ>այնկ>անգ, որից և է հոլովակերտի հավելումով անգէ||բնգէ:

Իրիցք -մրնէ մասնիկով հնագույն հետքեր են պարունակում նաև անօրմբնէ||բնօրմբնէ ձևերը՝ կառվելով գրաբարի յայնմանկ-ի վերջավորության հետ: Սակայն ամբողջ կառուցվածքով սեռականի հիմք + մրնէ, հիշյալ ձևերն ավելի ետին շրջանի կազմություններ են:

Անգէց||բնգէց ձևում ամենայն հավանականությամբ հանդես են գալիս բարբառների արևմտյան և արևելյան խմբակցությունների, ինչպես նաև հայերենի գրական երկու տարբերակների բացառական հոլովի է: ից ցուցիչները միասամանակ: Այստեղ կատարվել է այն երևույթը, որը բարբառագիտության մեջ անվանվում է խառնված (смешивание) և սպա՝ համահարթում (выравнивание):

Անգէլ||բնգէ և անգէց||բնգէց ձևերը հանդես են գալիս հիմնականում իրանիչ իմաստով, իսկ անօրմէ||բնօրմէ և անօրմբնէ||բնօրմբնէ տարբերակները միայն անձնանիչ կիրառությամբ, որոնք և անձ ցույց տվողների նման ունեն սեռականի հիմք +մ, մրնէ կառույց:

Գործիականը լրիվ հեռացած է գրաբարի այնու, այնուիկ ձևերից և ունի անվանական հոլովման կազմություն՝ սեռական +ով, անօրմով||բնօրմով:

Ինքն>ինէ և իրենք>իրեն գերանունների սեռական, տրական ձևերը կապվում են իք>իր և իրենաց>իրենց ձևերի հետ: Սրանց բացառականը և գործիականը ևս ունեն անվանական հոլովման կազմություն:

Ինգինբը դերանունը համապատասխան հոգերի հետ արտահայտում է 1-ին, 2-րդ, 3-րդ դեմքերի անձնական դերանվան իմաստ. ինգ-զինբը, ինգզինբը, ինգզինբը (ես ինքս, ինքս ինձ, զու ինքդ, ինքդ քեզ, ես ինքը, ինքն իրեն): Հոգնակին է՝ ինգզինգինբը կամ ինգզինգինբ: Հոլովումը կատարվում է անվանական հոլովման սկզբունքներով, սեռական-տրականում եզ. թվում ստանալով ի, հոգ. թվում՝ ու հոլովակերտը:

Անձնական դերանունների հոլովման հարացույցը

եզակի թիվ

ես > էս դու > տուճ

Ուղղ. էս տուճ
Սեռ. իմ քու
Տրակ. ինձ||ինձի||քեձի քեզ||քեզի||քրզի

Հայց. Իս, զիս, ինձ||ինձի||ընձի
Իացառ. Ինէ, իմմընէ, իզմէ
Գործ. Իզմով

ժեզ||ժեզի||ջրզի||ջրզի
բէնէ, քումբնէ, բէզմէ
ժեզմով

ան||ըն
անօր||ընօր
անօր||ընօր
ան, անօր||ընօր
անզէ||ընզէ, անզէզ
անօրմէ||ընօրմէ, անօրմէ||
ընօրմէ
անօվ||ընօվ, անօրմով||ընօր-
մով

ինբ
իբ, իբէն
իբէն
ինբ, իբէն
իբմէն, իբէնմէն, իբէնմէն

իբմով, իբէնմով

ինբզինբբս (բս, բ)— ինբզինբբս(իս, ին)— ինբզինբբէս(էս, էն)-
ինբզինբբովբս(բս բ)

Հ ո գ ւ Կ ի ր ի վ

մէնք (<մեք)
մէնբ
մէր
մէզ||մէզի
մէչ||մէչի
մէնէ, մէրմնէ,
մէզմէ
մէզմով

առք (<գոք)
ստբ
ժէր
ժէչ||ժէչի
ժէչ||ժէչի
ժէնէ, ժէրմնէ,
ժէզմէ
ժէչմով

անօնք||ընօնք
անօնբ||ընօնբ
անօնց||ընօնց
անօնզ||ընօնզ
անօնչ||ընօնչ
անօնմէ||ընօնմէ||
անօնմբ||ընօնմբ
անօնմզ||ընօնմզ

իբէնբ
իբէնց
իբէնց
իբէնբ, իբէնց
իբէնմէն, իբէնմբնէ
իբէնմով

ինբզինբնիս(իս, ին)
ինբզինբնուս(ուս, ուն)
ինբզինբնուս(ուս, ուն)
ինբզինբնիս(իս, ին)
ինբզինբնէս(էս, էն)
ինբզինբնովնիս(ովնիս, օվնիս),

Յ ու ց ա կ ա ն դ ե Ր ա ն օ Ւ Ն Ե Ն Ե—Գրաբարի այս, այդ այն դե-
բանուններին բարբառում համապատասխանում են աս||ըս, աս||ըտ,

ան||ըն, իսկ աս, զս նա ցուցականներին սբ, աբ, նբ ձևերը: Անկախ
զերանվանական կիրառություն ունեն միայն աս, ատ, ան տարբերակ-
ները: Աղ ճէ՛ մարքումն զրվախնա, ճէ՛ ա սասուզմէն: Ան էգավ:
Մյուս տարբերակները ունեն որոշչային կիրառություն. բս մարբը, նբ
մէզբ: Յուցականների հոգնակին է՛ ասօնք||ըսօնք, սբվօնք, ազօնք||ըրզօնք,
տրվօնք, անօնք||ընօնք, նբվօնք:

Աթ||ըս, ատ||բտ ձևերը և սրանց հոգնակները հարվվում են աս||
ըն, ափօնք||ընօնք ձևերի նման (վերջիններես հոլովումը արված է անձ-
նական զերանունների բաժնում): Տալիս ննք մյուս ձևերի հարացույց-
ները:

Ե գ ա կ ի ր ի վ

Ուղզ.-հայց.
Սևո.-տրակ.
Թացառ.
Գործ.

սբ
տբ
սբզօր
սբզօրմէ,
սբզօրմբնէ
տբզօր
տբզօրմէ,
տբզօրմբնէ
տբզօր
տբզօրմէ

նբ
նբզօր
նբզէ, նբզօրմէ,
նբզօրմբնէ
նբզօր
նբզօրմէ

Հ ո գ ւ Կ ի ր ի վ

Ուղզ.-հայց.
Սևո.-տրակ.
Թացառ.
Գործ.

սբվօնբ
սբվօնց
սբվօսմէ,
սբվօսմբնէ
սբվօսմով

նբվօնբ
նբվօնց
նբվօսմէ
նբվօսմբնէ
նբվօսմով

Յուցականների մյուս շարքերն են՝ ասիգա, աղիգա, անիգա, ա-
սանգ, աղանգ, անանգ||ըսանգ, ըրանգ, բնանգ, առչափ, ատչափ, ան-
չափ||ըսչափ, ըտչափ, բնչափ, բտիե, բտաե, բնդին, ասբան, ատբան,
անբան||ըսբան, ըսբան, բնբան, ասկերպ, աղէրպ, անգէրպ, բսղղէ,
ըղղղէ, բնղղէ, հօս, հօս, հօս, հօսաեղ, հօսաեղ, հօսեղէ:

Այս զերանուններից հոլովման լրիվ հարացույց ունեն հօսաեղ,
հօսաեղ, հօեղէլ շարքերը՝ սևո.-տրակ.՝ հօսաեղին, հօսաեղիին, հօեղէ-
լին, բացառ., հօսաեղին, հօսաեղին, հօեղէլին, գործ. հօսաեղով, հօս-
աեղով, հօեղէլով: Ասչափ... բսրին... շարքերն ունեն բացասական և
գործիական հոլովածաներ՝ ասչափէն..., ասչափով..., բտաիեին..., բս-
աիեով: Ասկերպ... շարքն ունի միայն գործիական հոլովածան՝ ասկեր-
բով, աղգէրբով, անգէրբով:

Յուցականների մյուս շարքերը շեղոք են հոլովի կարգի նկատմամբ:

Փ յ խ ա ղ ա ր ճ զ Երանունն է՝ Իբառ՝ Իբառու, որի հոլովման գրաբարի զԵրանական տիարը բարբառում փոխարինված է անվանականով.

Սեն.—Տրակ.—Հայց.— Իրար՝ Իրարու
 Բացառ.— Իրարմէ, Իրարումընէ

Հ ա ր ց ա կ ա ն ն ա ր ա ր ւ ր ա կ ա ն զԵրանուններն են՝ վօզ, վօր, ինչ՝ ինչ, ինչու, քանի, վօրքան, իշշափ, իշխան, ինչօր՝ ինչօր, իշղղէ, քանի եղ, ուրղի, ուր, յէփ, յէլիօ (կոր որ), վօզօր՝ վօզ օ (ոզ որ), ուրղէ, ուկէ, ուրղուր, վօր մէզը:

Վօզ-ը չունի հոլովման հարացույց, նրա թեքված ձևերի իմաստները արտահայտվում են վօր-ի հարացույցի միջոցով. սեռ.—տրակ-՝ վօրու(ն), հայց-՝ վօր, բացառ-՝ վօրումընէ: Չկա գործիականի հոլովածն:

Ուրղի-ը ունի բացառական և գործիական հոլովներ՝ ուրղիէն, ուրղիզով:

Վօրքան, իշշափ, իշխան զԵրանունների հոլովված ձևերը գրական լեզվի ազդեցություններն են:

Հոլովման լրիվ հարացույց ունեն քանի-քանիքէր, ինչ-ինչէր և վօր մէզը զԵրանունները.

Ե զ ա կ ի ք ի վ

Ուղղ-հայց.	քանի	ինչ	վօր մէզը
Սեռ-տրակ.	քանիին	ինին	վօր մէզիե՛կ վօր մէզու՛ն
Բացառ.	քանիէն	ինչէն	վօր մէզէն
Գործ.	քանիզ	ինչօզ	վօր մէզօզ

Հոգ. թիվ՝ քանիներ-քանիներուն-քանիներէն-քանիներօզ
 ինչեր-ինչերուն-ինչերէն-ինչերօզ

Հարցական-հարաբերական մյուս զԵրանունները չեզօք են հոլովի կարգի նկատմամբ:

Ո ր ա շ յ ա լ զԵրանուններն են՝ անլեր՝ անլերք, անլն մէզը, անլն ինչ, անլն բան, պիքունը, փօլօրը: Սրանք հոլովվում են անվանական հոլովմամբ՝ անլեր և անլն մէզը պատկանելով ու, մյուսները՝ ի հոլովման:

Անլեր-անլու՛ն-անլէն-անլեօզ
 անլն մէզը-անլն մէզու՛ն-անլն մէզէն-անլն մէզօզ
 փօլօրը-փօլօրին-փօլօրէն-փօլօրօզ
 պիքունը-պիքունին-պիքունէն-պիքունօզ

Ա ն ա ր շ զ Երանուններն են՝ մէզը, մքմ, ուրուքը, մէզալը, ափնը, անինը, ֆրլանը, ֆրստանը, իշ-ֆօր և քանի մք: Բացի իշ-ֆօր և քանի մք զԵրանուններից, մյուսները հոլովվում են անվանական հոլովման սկզբունքներով, մէզը ստանալով սեռական-տրականում ու կամ ի (բառ իրանիչ և անձնանիչ կիրառության), մյուսները՝ ի թեքումը: Բացի մէզ-ից մյուսները ստանում են հոգնակներաներ և գարձյալ կազմում հոլովման հարացույցներ: Մէզալը հոգնակիում զուգորդում է -ուն և -ներ ձևովների հետ՝ մէզալօն և մէզալներ: Անաշին զեզալում հոլովման իրականացվում է Բ/ց հերթադալությանը՝ մէզալօնց-մէզալօսմէն -մէզալօսմընէ: Եզակիի զեզալում՝ ի մասնիկով՝ մէզալին, մէզալին:

Փ յ խ ա կ ա ն զ Երանուններն են՝ վօզ մէզը, ուշ մէզը, վօչինը, ուշ պան: Հոլովվում են մէզ-ով բազազրվածները՝ նման վօր մէզը որոշյալ զԵրանական և նեշ պան-ը՝ սեռ.—տրակ.—ում ստանալով ի(ն):

Ս տ ա ց ա կ ա ն զ Երանուններն են՝ իմ, բու, անօր, իրէն, մէր, ծէր, անօնց, իրէնց: Սրանք հոլովվելիս ստանում են համապատասխան զեմքի հոգ, որին նախորդում է -ին միջամասնիկը՝ իմինքս, բուզինքս:

Ստացականների հոգնակիի կազմությունը, ինչպես նաև հոլովումը կատարվում է անվանական հոլովման հիմունքներով: Իմ և բու ստացականները հոլովվում են -ին միջամասնիկով և առանց զրա.

Ե զ ա կ ի ք ի վ

Ուղղ-հայց.	իմքս՝ իմինքս	բուքս՝ բուզինքս	անօրք
Սեռ.—տրակ.	իմիս՝ իմինիս	բուզիս՝ բուզինիս	անօրինք
Բացառ.	իմէս՝ իմինէս	բուզէս՝ բուզինէս	անօրինէնք

Իրէնը-իրէնինը-իրէնինէն-իրէնինօզ
 մէրք ծէրք անօնցք իրէնցք
 մէրինք ծէրինք անօնցինք իրէնցինք
 մէրինէն ծէրինէն անօնցինէն իրէնցինէն

Հոգնակի թիվ

իմիններքս	բուզիններքս	անօրիններք	իրէնիններք
իմիններքուս	բուզիններքուս	անօրիններքուս	իրէնիններքուս
իմիններէս	բուզիններէս	անօրիններէն	իրէնիններէն

Բայական համակարգը բնութագրվում է եղանակի, ժամանակի, դժժքի, թվի և սեռի քերականական կարգերով: Մրանցից յուրաքանչյուրը իմաստային տեսակետից համընկնում է հայերենի զարգացման բոլոր փուլերում բայ խոսքի մասը բնորոշող հիշյալ քերականական կարգերի արտահայտած իմաստներին:

Կառուցվածքային տեսակետից եւ բարբառը, որպես հայոց լեզվի բաղկացուցիչ մասը, իր բայական համակարգով հիմնականում մնում է ընդհանուր հայերենի³⁴ կազմավարներում:

Բայակազմություն

Բային բոս կազմության լինում են համազարկան և հարազարկան: Հարազար բայերը խոնարհվում են նույն ձևով, ինչպես հայերենում ընդհանրապես: Զուտ բայական հարազարությունների երկու բաղադրիչներն էլ մասնակցում են խոնարհմանը, իսկ մյուս ափսի հարազարությունների գեղարում խոնարհվում է միայն վերջին բաղադրիչը: Խոնարհմանը չի մասնակցում առաջին բաղադրիչը նաև այն դեպքում, երբ վերջինս փոխառյալ բայ է, որը, փաստորեն, հանդես է գալիս անվանական արժեքով: փարվամիչ քլլալ-փարվամիչ կըլլամ-փարվամիչ էլալ և այլն:

Բայական համակարգի բնության համար է՛լ ազնի կարևոր են բայերի համազարկան կազմությունները:

Նեխ անորոշ դերբայը դիտանք նյականային բայաձև, ինչպես սովորաբար արվում է հայ քերականության մեջ, այսպ համազարկան բայերի կառուցվածքը պետք է բնութագրել ճիմվ-բայական վերջավորություն կազմավարով:

Բայերի հիմքը, ողջ հայերենի նման, լինում է ածանցավոր և անածանց: Բայածանցները խմբավորվում են հիմքակազմ, կերպանիչ և սեռանիչ տեսակների մեջ:

Հիմքակազմ ածանցներն են՝ (ա, է, ը) և և չ: Առաջինը պատմականորեն հանդուս է զբարբարի և, աև, են ածանցներին: Գրաբարի և ածանցով բայերը ն-ն պահում են անփոփոխ, աև և են ածանցների ա, և ձայնավորները համապատասխան հնչյունական օրենքների (միջին վանկի ձայնավորի փոփոխություն) հիման վրա ընկնում կամ հնչյու-

³⁴ Ընդհանուր հայերեն ասելով հասկանում ենք հայերենի այն համակարգը, որն ընդհանուր է դարբար, միջին հայերեն և աշխարհաբար շրջանների համար:

նափոխվում են ք-ի, իսկ երբեմն էլ աև, են ածանցները հանդես են գալիս նույնությամբ. թթնուլ-բրբեկ, տեսանել-ալեսալ, ագանիլ-հալ-նիլ, վախենալ-վախնալ, մտանալ-մտղնալ:

(Ա, է, ը) ն-ն կենսունակ ածանց է և բացի զբարբարի հետ ընդհանուր բայերի շերտում հանդես գալուց, զուգորդվում է բազմաթիվ արժանանքի (հայերեն և փոխառյալ) հետ՝ ստեղծելով նոր բայահիմքեր՝ շատ + ալ-շաղնալ, որնող + սն + ալ-ըրնողնալ-ըրողնալ, զայղ + են + ալ-զայղնալ, խնղ + ց + ալ-խըղնալ:

Կիրառության խիստ սահմանափակ ոլորտ ունի չ հիմքածանցը: Կարելի է առել, որ արևմտյան խմբի բարբառներում այն անհատացման եղբին է նախ՝ այլ ածանցով նոր բայահիմքեր չեն ստեղծվում, ինչպես (ա, է, ը) և ածանցով, երկրորդ՝ զբարբարի չ բայածանցը բարբառում հիմնականում փոխարինված է ն-ով կամ ընկած է³⁵. շ-ով ձևերը ներկայացնում են զուգահեռ առաքերակ. թուչի > բրոնիլ > բրոնիլ, փախել > փախնիլ > փախնիլ > փախնիլ > կոչել > կրբնալ, փլչել > փրբիլ, ուռչել > ուռիլ:

Այստեղ չեն գործառուսվում զբարբարի -նչ, -աչ, -անչ հիմքածանցները: -նչ ածանցով բայերից կա միայն կոբնել-ը կոբսբլի³⁶ ձևով: Մապատկանում է -վլիք ածանցով շեղոր սեռի բայերի խմբին:

ձանաչել > նանաչալ > ճանչալ > ճանչալ > ճաչալ բայի չ- (< չ) -ն բարբառում հանդես է գալիս իբրև արևմտական հնչյուն և պահվում է անցյալի հիմքից կազմվող ձևերում՝ հակառակ զբարբարի, ուր -չ-ն (կամ -աչ-ը) ածանց է³⁷ և օրինակաբարեն ընկնում է անցյալի ձևերում. սնց, կատ. զբբ.՝ ժանեայ, բբբ.՝ Գաշա: Մյու բայը բարբառում հանդես է գալիս նոր ածանցով՝ -ն-ով ձայնալի համանման կազմություն ունի ամաչել > ամըչնալ > ամըչնալ բայաձևը:

³⁵ Չ բայածանցի առկայություն-բացակայություն հասկանելով հայերենի բարբառները հիմնականում բաշխվում են արևելյան խմբացույցությունների միջև: Սեռի հայ բարբառների զուսակարգան համար հիշյալ հասկանիչը խիստ էական է, որը հնչյուսումը առկա է նույնպիսի աղբյուրներ, ինչպիսիք, սանքը, առյուս ևն բացառական ձևով է (և) և (ի, ու, ա) ընթացիկորով տարբերակաբանություն, ներգայական հոլով առկայություն-բացակայություն և բարբառները մեծ խմբերով բաժանող քիչ թվով այլ մի քանի հասկանիչներ:

³⁶ Կոբսբլի բայը բարբառում սկզբնաձև է զարմել զբարբարի պատճառականի կոտուսնել ձևից. բարբառում նրա պատճառական է կոբսբնել, որի մեջ ծագումնաբանորեն առկա է պատճառականի կրկնակի ածանց՝-որն և -ցրն:

³⁷ ձանաչել բայում Անառյանը ածանց է համարում -չ-ն (Արմատական բուսաբան, 7, 4, էջ 588-589), Ա. Արբուսաճյանը՝-աչ-ը (Գրաբարի ձևնալի, Որևան, 1958, էջ 111):

Ի տարբերություն գրաբարի, որ բազմապատկան կերպանիշ անանցները թվով սահմանափակ են և գործածությունը հազվադեպ, բարբոսներում խիստ հաճախանում է դրանց կիրառությունը, միաստմանակ հանդես են գալիս մեծ թվով որո կերպածանցների, Գրաբարի -տ>ղ, -ստ>աղ||ղ, -ոտ>օղ անանցների հետ միասին բարբառում գործառում են -կօղ, -ող||րղ, -վօր||ավօր⁶⁶, -վրղ, ր, -րղ, -գրղ, -ղրրղ, -գրվ, րարկ, -րկ, -լղ||րղ, -լըր, -կըր||գըրղ, -վըրղ||վըրղ, -(ը)նզ կերպածանցների. արխաղէ, ուտեփօրիլ (ուտեցավորվել), նաքրղէ, Լեւզղիլ, շնքրղիլ, կարմրղրղիլ, խազրղրղէ, ձեզզրղիլ, ձեզզրղիլ, կամբրղիլ, պըշըլալ||պըշըրղալ, պօշըրղալ, րտկըրղէ, քըսըրղգէ, ասխըրղէ:

Կերպածանցները կենսունակ լինելուց բացի, օժտված են այլ անանցների հետ զուգորդվելու ունակությամբ: Այդ զուգորդումներում նրանք լինում են առաջին բաղադրիչը. ճըմ-ըօթղ-էջ-վ-իլ-ըմըրղգէս-ֆիլ:

Սուանիշ անանցներն են՝ -վ||ֆ և -(ա, է, ք, ու)ց||ժ(ըն). (-ֆ և -ծ տարբերակները հանդես են գալիս իսով շփականների և սուականների հարեանություններ):

-վ-ն գրվում է ներգործական սեռի բայերի վրա՝ վերջիններս դարձընելով կրավորական սեռի. Հօզը գրվաբղէ (շարժում է, տարտերում է) բարդին (ներգործ. սեռ): Պարդին գրվաբղիլ հօլէն (կրավորական սեռ): Անդրադարձություն և փոխադարձություն ցույց տվող բայերում -վ||ֆ -ն արտահայտում է նաև շեղոր սեռի իմաստ: Արամը ևէլղվեցավ ճօր բիրզը (շեղոր սեռ): Պարանք փըրքֆավ (շեղոր սեռ):

Ե և ի լծորդություն պարզ և -ն անանցով ներգործական սեռի բայերի դեպքում -վ||ֆ-ն գրվում է ներկայի (ուզէլ-ուզվիլ արբիլ-արբըվիլ, տունալ-աւներվիլ), իսկ և լծորդության և մյուս անանցներով բայերի դեպքում՝ անցյալի (աղալ-աղասֆիլ, մօղէնալ-մօղէսֆիլ) հիմք վրա -վ||ֆ-ն բայական համակարգում ունի բայականական, այլև ձևակազմական նշանակություն: Նախ՝ -վ||ֆ ստանալիս բայերի ա, է լծորդ ձայնավորները վերածվում են ի-ի (նէղէլ-նէղվիլ, աղալ-աղասֆիլ), որը

պահպանվում է խոնարհման ողջ հարացություն, և այսպե՛ս անկախ սեռից -վ-սիպավ թայերի անցյալ կատարյալը ունենում է կրավորական խոնարհում դարբարյան իմաստով:

Սուանիշ(-ա, է, ք, ու)ց||ժ(ըն) անանցը բարբառում երևան է գալիս գրաբարի ոյց+սն>ուցան անանցի դիմաց. հասուցանել>հաս-ծրնէլ, փախուցանել>փախցընէլ|փախծընէլ, աշխատեցուցանել>աշխատընէլ|աշխածընէլ, բարբառային կազմության օրինակներ՝ ժըմ-նէցընէլ (հասունացնել, լրացնել), ճօխօխցընէլ|ճօխօխծընէլ, խըլավ-ցընէլ|խլավցընէլ:

Ի տարբերություն գրաբարի, որ բոլոր բայերի (անանցավոր և անանանց) պատճառականը կազմվում է անցյալի հիմքից՝ անանցի հաս-վելունով, բարբառում անանցի հավելումը կատարվում է բայարմատի վրա, որը միայն -ն և -շ անանցներով բայերի դեպքում է համընկնում անցյալի հիմքին (մի շարք բայերի անանցից առաջ պահպանվում են լծորդ ձայնավորները). զբբ.՝ լիշէն-լիշեցուցանել, մօտենալ- մօտեցուցանել, կարգալ -կարգացուցանել, փակել- փախուցանել, տեսանել-տեսուցանել, բբբ.՝ հիշէլ-հիշեցընէլ, մօղէնալ-մօղէցընէլ, կարբալ-կարբբցընէլ, փախելիլ-փախցընէլ, տէնալ-տէնցընէլ:

Պատճառական բայերի այդօրինակ կազմությունը բարբառում, գրաբարի համեմատությամբ, ստեղծվել է այդ բայերի ներկայի և անցյալի հիմքերի նոր տիպի հակադրություն. ներկայի հիմք, զբբ.՝ լիշեցուցան, բբբ.՝ հիշեցըն, անց, հիմք, զբբ.՝ լիշեցուց, բբբ., հիշեցուց:

Բարբառում պատճառական անանցի -(ա, է, ք, ու)ց||ժ(ըն) տարբերակով հանդես են գալիս ներկայի, իսկ -(ու)ց տարբերակով՝ անցյալի հիմքից կազմողները. կըլեցընիմ-կըլեցուցիլ:

Պատճառականների կազմության նշված օրինակափոխությունից բարբառում դուրս են մեծում մի քանի բայեր, որոնք անորոշում են հանդես են գալիս անցյալի հիմքով, ինչպես՝ ցացընէլ, կէցընէլ:

Պատճառականություն իմաստը բացի անունումից արտահայտվում է նաև ներգործական սեռի բայերի հետ ապլ բայի հարադրությամբ. ազաղէլ դալ, ծախէլ դալ, պլեկ դալ, սիբէլ դալ և այլն:

Մ և ո ի կ ա ր գ ր Է Լայտնի է, որ դարբարում շկան բայերի ներգործական, կրավորական և շեղոր սեռերի հակադրությունը հասակորեն արտահայտող ձևաբանական ցուցիչները՝ ներգործական և կրավորական խոնարհումները միշտ չեն, որ համընկնում են հասնապատասխան սեռերին Իսկ շեղոր սեռի բայերը, բայ լծորդությունների, ունեն կամ ներգործական կամ կրավորական վերջավորություններ: Լանսախ էլ միևնույն

⁶⁶ -վոր||ավօր-ի բայական անանց լինելու մասին տե՛ս Ա. Աբրահամյան, Բայբ... էջ 134, է. Ազայան, Նշվ. աշխ., էջ 313-314: Երգիկայի բարբառում -վօր||ավօր անանց բայերի մեծ խմբում հիմքակազմ անանց է, ինչպես արևիօրիլ (տեսավորել), պզղօրիլ (բարխավորել), իսկ մի քանի բայերում նաև կերպանիշ՝ ուտեփօրիլ (ուտել մի քանի տեղից):

բայանով (զբանք ընդունված է կոչել հասարակ բայեր) արտահայտվում են և՛ կրավորական, և՛ ներգործական սեռերի իմաստներ: Իսկ բայի անդամ ձևերը ընդհանրապես չունեն սեռի ձևաբանական արտահայտություն: Սեռի իմաստային տարբերակումը զրաբարում հիմնականում կատարվում է շարահյուսական մակարդակում՝ ի դեմս բայիմաստի և նրա խնդրաուսթյան:

Ստորաբայյան շրջանում զգալիորեն պարզեցվեց սեռերի հակադրությունն արտահայտելու ձևաբանական միջոցը՝ հանձինս -վ բայածանցի: Երզնկայի բարբառում ևս վ-ի (բոս հնչյունական դիրքերի -ֆ) առկայությունը-բացակայություն հատկանիշով ստեղծվում է կրավորական և ներգործական սեռերի հակադրություն՝ սկսած հենց անդամ ձևերից- սիրել-սիրվիլ, ազաղել-ազաղվիլ, աղալ-աղալֆիլ:

Սակայն բարբառներում քերականական շատ ձևերի արտահայտություններ, լինելով անցումային օգաններ զրաբարից դեպի աշխարհաբարի համակարգը, ի հայտ են բերում երկու համակարգերի տարբեր: Այսպես, նորագոյանություն կրավորական -վ ցուցիչի հետ բրբու. կրավորական սեռի արտահայտման համար գործածում է նաև զրաբարյան ձևը՝ խոնարհման վերջավորությունների տարբերակված արտահայտությունը՝ կրավորական-ներգործական խոնարհման վերջավորություններով ստեղծելով կրավորական-ներգործական սեռերի հակադրություն:

Նշված հակադրությունն արտահայտվում է անց. կատարյալ և բզձ. ապ. և նրանից կազմվող ժամանակաձևերում : Վերջինիս դեպքում իբրև սեռերի տարբերակման հատկանիշ հանդես է գալիս է-ի լծորդ ձայնավորների հակադրությունը՝ նման զրաբարին.

ներգործ. սեռ. ազաղեցի, ազաղցիր, ազաղց...
շարժի³⁹, շարժէս, շարժէ...

կրավոր. սեռ. ազաղցա, ազաղցար, ազաղցամ...
շարժիմ, շարժիս, շարժիս...

Ավելին, որոշ բարբառներ միևնույն քերականական իմաստի արտահայտման համար զրսեղորում են թե՛ հին, թե՛ նոր համակարգի ձևերը միա-

ժամանակ, աչգլիսով նույն իմաստը մատնանշելով կրկնակի ցուցիչով⁴⁰, Այս երևույթը երզնկայի բարբառում, ինչպես նաև արևմտյան խմբակցությունների մի շարք բարբառներում, երևան է գալիս կրավորական սեռի արտահայտության մեջ: Ընց անորոշում ներգործական սեռի է (<Ե> լծորդության բայերը կրավորականի վերածվելիս -վ ձևույթն ընդունելու հետ է-ն փոխում են ի-ի, որը ավելյալ զեպրում կրավորական սեռն արտահայտում ձևային նշան է նաև՝ ուղել-ուղվիլ, փարդել-փարդվիլ: Ի լծորդ հիմնականում աչգլիսի դեր ունի նաև զրաբարում: Խոնարհման հարաբերությունը բզձականում և նրանից կազմվող ձևերում պահպանվում են է՝ -վ-ն, և՛ ի-ն. սիրվիմ, սիրվիս, սիրվի:

Կրավորական սեռը կրկնակի ցուցիչով զրսեղորելը ավելի ակներև է անցյալ կատարյալ ժամանակում, որտեղ -վ-ի հետ պարտադիր կերպով հանդես են գալիս զրաբարի կրավորական վերջավորությունները- սիրվեցա, սիրվեցար, սիրվեցամ...

Աչգլիսով, ներգործական և կրավորական սեռերի հակադրությունը բարբառում արտահայտվում է հետևյալ հատկանիշներով.

ա) -վ բայածանցի առկայություն-բացակայություն՝ լծորդ ձայնավորների հակադրության ուղեկցությամբ՝ ազաղել-ազաղվիլ,

բ) է-ի լծորդ ձայնավորների հակադրություն՝ ազաղել-ազաղիլ, գ) ներգործական-կրավորական խոնարհում հակադրություն՝ ազաղեցի-ազաղցա,

դ) ներգործական-կրավորական խոնարհում հակադրություն՝ -վ բայածանցի բացակայություն-առկայություն հակադրության ուղեկցությամբ՝ ազաղեցի-ազաղվեցա:

Ներգործական սեռի բայերի հակադրությունը շեղոքներից ընդհանուր առմամբ արտահայտվում է -վ||ֆ բայածանց ընդունելու-շրջադրման, իսկ կրավորականներիինը՝ -վ||ֆ-ի առկայություն-բացակայություն հատկանիշով: Սակայն նրկու հակադրություններն էլ չեղորների համար թույլ հատկանիշներ են, որովհետև հաճախակի են խախտվում սահմանները, որոշ շեղոքներ երբեմն ստանում են -վ||ֆ. Ըտ սովալին խոսելով հօր շիշնրվիլ (Այդ հիմարի խոսքով կարելի չէ հօր իշնել):

Ավելի թույլ է կրավորական և շեղոք սեռի հակադրությունն արտահայտող -վ||ֆ-ի առկայություն-բացակայություն հատկանիշը, քանի

³⁹ Ի-ն այստեղ ոչ թե կրավորականի ցուցիչ է, այլ խոնարհման համակարգում գործող ընդհանուր օրինաչափության արդյունք, բայ որի սեպալիններից առաջ է-ն վերածվում է ի-ի: Առաջացած համանունության պատճառով ներգործական և կրավորական սեռերի հակադրությունն այս դեպքում չեղարացված է:

⁴⁰ Կեսարիայի բարբառում, օրինակ, անօրոշ զիրարը գոյականաբար հուղվելիս հանդես է բերում զրաբար ոչ>ա հուղվանքում, միամտմանով ունենալով անվանական տարածված ի-ն՝ կարցուլ-ուլ-ի, որով ստացվում է սեռական-առկակի երկնակի ցուցիչ (տե՛ս Մ. Աբրաջյան, Կեսարիայի բարբառը, Երևան, 1961, էջ 69):

որ այդ անանցով հանդես են գալիս անգրագրածութունն և փոխադարձութունն ցույց տվող մի խումբ բայեր, որոնք բառ սեռային պատկանելությունն կրավորակերպ չեզոքներ են, ավազվորվի, պաշրոմվի, տարբրվի, հաբխի, սրբի, մեղեղվի, կարճի: Այս բայերի հակադրություններն կրավորականներին չեզոքացված է, որովհետև ինչպես անցեմ, այնպես էլ դիմավոր աներում նրանք միմյանց հետ հանդես են բերում և անային բացարձակ նույնությունն, խոնարհման մասնակ կրկու խմբում էլ հանդես են գալիս ի լծորդը, -վ անանցը և -էցա-էցար, -էցավ... կրավորած վերջավորությունները կարճիմ, կարճիս, կարճի, կարճիցա, կարճիցար, կարճիցավ... Այս խմբի չեզոքները ներգործականներին հակադրում են նույն հատկանիշներով, ինչով կրավորականները:

Ընդհանրապես չեզոք սեռի բայերը խոնարհման հարացույցում չեզոքանում են մերթ ներգործական, մերթ կրավորական սեռի բայերի հետ՝ ըստ համապատասխան լծորդությունների հանդես բերելով նույնական վերջավորություններ:

Այդ բուրրից կարելի է եզրակացնել, որ ներգործական-կրավորական-չեզոք սեռերը ձևարանական մակարդակում հատակորեն չեն հակադրվում միմյանց, որովհետև նրանցից ոչ մեկը չունի ինքնակն և միանշանակ ձևարանական ցուցիչ: Սեռերի իմաստային տարբերակման ճշգրիտ ոլորտը ի վերջո հանդիսանում է շարահյուսական մակարդակը՝ նման գրաբարին:

Հիմնականություն

Բայի բուրր աները կազմվում են ներկայի և անցյալի հիմքերից, ինչպես նաև անորոշ դերբայից:

Ներկայի հիմքը բայի էլակետային ձևի՝ անորոշ դերբայի, հիմքն է: Այն լինում է անանցավոր և անածանց:

Ներկայի հիմքից են կազմվում հետևյալ ժամանակները և դերբայները. գրաբարի նման՝

ա) բուրր բայերի (անանցավոր և անածանց) բղձ, եղ, այ, և անց. այ, (այս ձևը համապատասխանում է գրաբարի սահմ, եղ, ներկա և անց, անկատարին), ինչպես նաև՝ բղձ, կազմվող սահմ, եղ, ներկա և անկատար, այ, և անց, այ, ժամանակները. խօս-իմ, տես-ամ, ազգով-իմ, հասկըց-իմ, կրկոս-իմ, կրկն-ամ, կազավ-իմ, կրկն. կըց-իմ, պի խօս-իմ, պի դեսն-ամ, պի ազգով-իմ, պի հասկըց-իմ:

բ) Արգելական հրամայականը եզ, և հոգ, թվերում՝ մի՛ խօսիւ, մի՛ խօսիւք, մի՛ մօղէնար, մի՛ մօղէնաք, մի՛ փախցընէ, մի՛ փախցընէք: գ) Անորոշ դերբայը. բսլ, հարցադի, հասնլ, մօղէնալ, փարզիլ, հօղվըզալ, Լըզընցել:

դ) է, ի լծորդություն անածանց, ինչպես նաև դրանց և անանցով բայերի ու պատճառականների ենթակայական դերբայը. պլեոզ, ազա-զոզ, տխնօզ, իշնօզ, փրցըցեոչ:

-վ սեռանիշ, դ, աղ, զօղ և մյուս կերպանիշ անանցներով բայերի դիմավոր և անցեմ ձևերի կազմությունները նման են է, ի լծորդություններով պարզ բայերի կազմությանը, ուստի վերջիններին մասին ասվածը վերաբերում է նաև հիշյալ անանցներով բայերին, ինչպես վերը հիշատակած դեպքում՝ ինչդղօզ, հարբողոչ:

ե) է, ի լծորդներով անածանց բայերի հարակատար և վաղակատար դերբայները: Սրանք համապատասխանում են գրաբարի անց, դերբայները. որը նշված խմբի բայերում հանդես է բերում ներկայի և անցյալի հիմքից զուգահեռ կազմություններ՝ սիբեալ և սիբեցեալ, իսկ ներքին էլ միայն անցյալի հիմքից կազմություն՝ հայեցեալ: Բրբո, կայունաց-իւ էլ միայն ներկայի հիմքից կազմությունները. սիբե, խօսե, նաե, հանե, զմեզե—սիրամ, խօսած, հայած, հանած, զանցած:

զ) Ներկայի հիմքից է կազմվում նաև ժխտան դերբայը, որն իբրև այդպիսին գրաբարում չկար, ուղե, վազե, տառեար, հասնիւ, մօղեար, մօղէնար, ավըվե, շօրցընէ:

Ի տարբերություն գրաբարի՝

ա) անածանց բայերի բուն հրամայականի եզակին. խօսե՛, վազե՛, ազա՛: Այս ձևերը ուղղագծորեն համապատասխանում են գրաբարի խօսեա՛ն, վազեա՛ն, ազա՛ ձևերին (եա>է հնչյունափոխություն), որոնք գրաբարում դիմավում են անցյալի հիմք (անշնշտ դիրք առանց ց-ի)⁴: Բարբառում, սակայն, դրանք անցյալի հիմք դիմել չի կարելի:

Անցյալի հիմքը բառ կազմության երկու տեսակ է՝ ցույական (ց-անանց) և ոչ ցույական (արմատական): Բարբառը չունի գրաբարի ի թուլ բաղադրիչով անցյալի հիմք: Այդպիսին ունեցող բայերը հիմնականում հանդես են գալիս ոչ ցույական, մասամբ միայն՝ ցույական հիմքով. գրբ, բաբ, փախի, բրբ, բախի, բայց՝ գրբ,՝ գաբրի, բրբո՝ աքրընց: Զարքնալ բայը բարբառում դանդաղով ա լծորդության անանցավոր բայ՝ բարբառում օրինաչափորեն ունի ցույական հիմք:

4) Տե՛ս Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևերակ, էջ 165—166:

Անցյալում ոչ ցոյական հիմք ունեն. դրաբարի նման՝
ա) է, ի լծորդութիան ն-ածանց բայերը՝ հասնել-հաս, մլնելի-մլն,
հաբնիլ-հաբ:

Գրաբարի հնչյալ լծորդութիւններով մի շարք բայեր բարբառում
թեև փոխել են լծորդութիւնը՝ վերածվելով ա-ի, պահպանել են, սակայն,
անցյալի ոչ ցոյական հիմքը. տեսանելի>տվնալ-տվա, մտանելի>մտը-
նալ-մրդ, գտանելի>կրցնալ-կրդ, անկանելի>ինալ-ինգ: Ինալ-ի անորոշ-
շում ընկած կ-ն անցյալի հիմքում և նրանից կազմվող ձևերում վերա-
կանգնվում է իջանելի>ինալ>ինչա կատարելի ձևում առկա ն-ն ոչ
ին բայածանցի արժեքով հանդէս եկող ձևով է (գրաֆորված), այլ
հայկալի հնչյուն, որը բացատրվում է հնչյունական այն օրինաչափու-
թյամբ, ըստ որի շնչեղ խուլիքից առաջ ավելանում են անգայիններ
(հմտ. կանալ>կանանլ):

Չարքանելի>հարցնելի, ցուցանելի>ցուցնել բայերը գրաբարում օրի-
նաչափորեն ունեն ոչ ցոյական հիմք՝ հարց, ցոյց (անշեշտ դիրքում՝
ցուց): Բարբառում դրանք ձևով նման լինելով պատճառականներին՝
վերջիններն համարանկությամբ ունեն ցոյական հիմք՝ հարցուց, ցուցց:

Գրաբարում ու լծորդութիւն բայերը անցյալում ունեն ոչ ցոյական
հիմք: Բարբառում այդ բայերը բաշխվելով այլ լծորդութիւնների վրա՝
բոլոր լծորդութիւնների ու կազմութիւն (ածանցավոր կամ անածանց)
ունենում են ոչ ցոյական կամ ցոյական հիմք: Այսպէս, առնուլ>առնել-
առ, թքնուլ>թքնելի>բրլ, կնուլ>կուլել-կուլեց:

Աւ լծորդութիւնը հանդէս եկող միակ բայը՝ բողոլ, անցյալում ունի
ցոյական հիմք՝ բողուց:

Անցյալի ցոյական հիմքը ստեղծվում է հնչյունական հերթագայու-
թիւնների միջոցով.

ա) ինչպիսի գրաբարում, անորոշից լից հերթագայութիւնամբ ստեղծվում
է է, ի, ա լծորդութիւններով անածանց բայերի անց. հիմքը⁴². ի լծոր-
դութիւնը այս դեպքում դանդում է է. բաշխ-լալէց, նախ-նալէց, վազել-
վազէց, սխրել-սխրէց, մընալ-մընաց, խազալ-խազաց||խախց:

Այդ խմբի մի բանի բայեր շեղվում են ընդհանուր օրինաչափու-
թիւնից՝ անցյալում հանդէս բերելով ոչ ցոյական հիմք. բւել-բա(ի),

նըստի-նըստ, պէրէլ-պէր, սձէլ-սձ: Բացի ասիլ բայից, մյուսները
նույնպիսի հիմք են զբաղեցրած նաև գրաբարում:

Է, ի լծորդութիւններով մի շարք բայեր, որոնք գրաբարում հան-
դէս են գալիս անանցավոր, իսկ բարբառում անածանց ձևով, անց. հիմ-
քում մերթ նմանվում են գրաբարյան ձևին (ոչ ցոյական), մերթ էլ անց-
հիմքը ստեղծվում է բարբառի անածանց ձևի օրինաչափութիւնով (ցոյա-
կան). զրբ.՝ սկանանիլ-սկա||սկա, օծանել-օծ, բրբռ.՝ բսկըսիլ-բսկըս,
բայց՝ օձէլ-օձէց: Այստեղ, ըստ երևույթին, դեր է խաղում բայերի սե-
ռանդի պատկանելութիւնը՝ Դիտելի է, որ ներգործականները հանդէս են
բերում ցոյական, իսկ չնդրսիները՝ ոչ ցոյական հիմքեր: Կրավորական-
ների համար հիմքերի հակադրութիւնները էական դեր չունեն, դրանք
ավելի շատ թվադրում են դիտմանովային վերջավորութիւնների հակադ-
րութիւններ:

Սպանանելի>բսպաննել բայում թեև առկա է գրաբարի -ան-ին հա-
մապատասխանող -ն օձանցը, բայց վերջինս չի դիտակցվում իբրև ա-
ծանց, որի պատճառով էլ այդ բայի անց. հիմքը ոչ անանցավորների
նման ցոյական է՝ րսպաննէց, հակառակ գրաբարի սպան ոչ ցոյական
հիմքի:

Չարքանելի>գնարգլ բայը անց. հիմքում ունի ոչ ցոյական և ցոյա-
կան զուգահեռ տարբերակներ՝ գնարգ և գնարգլց, առաջինը իբրև կազմու-
թիւն գրաբարյան, երկրորդը՝ բարբառային ձևից:

բ) Բայահիմքից նկ հերթագայութիւնով է ստեղծվում ա լծորդու-
թիւն անանցավոր բայերի անցյալի հիմքը՝ նման գրաբարին. մտնալ-
մտց, կողնալ-կոխց, մողնալ-մողնց, մկղնալ-մկծց||մկծծ (վերականգ-
նրվում է նախկին ծ-ն): Նույն հերթագայութիւնն է առկա նաև պանալ-
պաց, կէնալ-կէց, նուլ-խլլնալ-լէց ձևերում:

դ) Ռնւրց հերթագայութիւն է անցի ունենում պառնալ, տառնալ
թայերում՝ պարց, տարց: Վերջինս երբեմն հանդէս է գալիս նաև ոչ ցո-
յական հիմքով տառ:

դ) (Ա, Է, ր)ց||ծ(ըն) անանցով բաւերի անց. հիմքը ստեղծվում է
բայահիմքից ընկուց հերթագայութիւնով՝ հակառակ գրաբարի ուցանուց
հերթագայութիւն. զրբ.՝ փախուցանել-փախուց (շեշտված դիրքում՝
փախոյց), զարմացուցանել-զարմացուց, մուշուցուցանել-մուշուցուց, բրբռ.
փախցընել-փախցուց, կարմացընել-զարմացուց, մողնցընել-մողնցուց:
Չերթագայական տարբեր տիպերով, սակայն, առկա է պատճառա-
կանների անց. կատարայի նույնաձևութիւն գրաբարում և բարբառում
կանակածից դուրս է, որ բարբառի անցյալի ձևերը ուղղակիորեն առաջա-

⁴² Ե, ի լծորդութիւններով բայերի գրաբարի անցյալի հիմքի շեշտված դիրքի -ևաց.
անշեշտ դիրքի -կց-ի փոխարեն բարբառում միշտ հանդէս է գալիս -կց. զրբ.՝ գրեցի,
գրեաց, զրբ.՝ կրելցի, կրելց:

ցիւն են գրաբարի նույն ձևերից: Անց, հիմքում առկա երկու ց-իքից առաջինը հիմքածանց է, երկրորդը՝ պատճառականի, որը բարբառում հանդիս է գալիս իր նախնական տեսքով՝ ու ձայնավորի հետ զուգորդված, ինչպես՝ հրամացուցի, անցուցի, վախցուցի:

Բարբառի ձևերի կազմության համարանույնյամբ են ստեղծված -ն և -շ ածանցներով բայերի անց, հիմքերը՝ տէցուցի, փախցուցի, հասցուցի՝ գրաբարի տեսուցի, փախուցի, հասուցի կանոնաչօր ձևերի փոխարեն: Բարբառի ձևերի առաջին ց-ն կապ շուրի ո՛չ անց. հիմքի, ո՛չ էլ պատճառական ածանցի հետ:

ե) Անց, հիմքի նյւ հերթագայություն է առկա տանել-տար, անել-ար, տրեւել-տրբ բայերում: Հերթագայություն ստիպով է նրա մէջ բաշխվող օրինակներով բարբառը համարկնում է գրաբարին:

զ) Չ/վը- գրաբարի մի քանի բայերի դիմաց (տալ-տուալ, լսել-լուսայ) հերթագայական նշված տիպով բարբառում հանդիս է գալիս միայն տալ բայը՝ արվ(ի):

Անց, հիմքից կազմվում են այն ժամանակաձևերը և զերբայները, որոնք այդ հիմքից են կազմվում նաև գրաբարում: Գրանք են՝

ա) բոլոր բայերի անց, կատարյալ ժամանակը. հանկցի, վախցա, տեսա, սիցա, քրոցուցի, օլբովկցա, հրմբբղզկցի.

բ) բուն հրամ. հոգ., իսկ ածանցավոր բայերի նաև եզ.՝ վազէցէ՛ք, մընացէ՛ք, կրնէցէ՛ք, արվէ՛ք, ա՛ն-առէ՛ք, աէ՛ս-աէ՛տէ՛ք, մըղի՛ր-մըղէ՛ք, իըմցու՛ր-խըմցուցէ՛ք: Պատճառականի եզ. հրամ. տեղի է ունենում անցյալի հիմքի ց/ր հերթագայություն. ծիխցուց-ծիխցա՛ւր.

զ) (ա, է, ր)ն, շ և (ա, է, ու, ր) ց]մ (քն) ածանցներով բայերի հարակատարը և վաղակատարը. փախալ, բռնած, տեսած, ծառվըցած, կիցած, անցուցած, հրամացուցած-փախիւր, բրոէր, ւտէտր, ծառվըցէր, կիցէր, անցուցէր, հրամացուցէր:

Բարբառային կազմության և փոխառյալ հիմքերով բայերն ըստ կազմության (ածանցավոր և անածանց) և լծորդությունների անցյալի հիմքում բաշխվում են համապատասխան տիպերի (ցոյտկան և ոչ ցոյտկան) միջև:

Ներկայի և անցյալի հիմքերում տարահիմքերով հանդիս եկող բայերը բնվում են Անկիսնոն բաշխք բաժնում:

Անորոշ դերբայը իբրև հիմք հանդիս է գալիս ընթացակցական դերբայի մեջ: Անորոշին ափելանում է -լէ. ի լծորդության բայերի ի-ն այս զնպարում փոխվում է է-ի. ուղէլ-ուղէլէն, ննիլ-ննիլէն, խրեղալ-խրեղալէն. շաք դաշտին մէլ էրգար մընալէն ձագգէր էլ:

Բայի անդեմ ձևերը ունեն հետևյալ շարքերը.
անորոշ—լըսել, խազնլ, խօսիլ, հաբնիլ, մընալ, հասկընալ
վաղակատար—լըսել, խածլ, խօսել, հաբն, մընացել, հասկըցել
հարակատար—լըսած, խածած, խօսած, հաբած, մընացած, հասկըցած

հնթակայական—լըսող, խազնող, խօսող, հաբնող, մընացող, հասկըցող

ժխտման—լըսէր, խազնէր, խօսիր, հաբնիր, մընար, հասկընար
ընթացակցական—լըսէլէն, խազնէլէն, խօսէլէն, հաբնէլէն, մընալէն, հասկընալէն:

Գրաբարի համեմատություն բացակայում է ապ. զերբայը, իսկ նորակազմություն են հարակատար, ժխտման և ընթացակցական դերբայները:

Վերորոշյալ շարքերից բուն դերբայներ են՝ անորոշը, ենթակայականը, ընթացակցականը, կիրառելիան ոլորտների մեծ մասով նաև հարակատարը, իսկ կախյալ⁴³ դերբայներ են վաղակատարը, ժխտմանը, մասամբ միայն հարակատարը:

Ա ն ո Ր Ո շ ղ Դ Ե Ր Ա Յ : Դասական շրջանի անորոշ դերբայի Ե,ա,ու լծորդությունների դիմաց⁴⁴ բարբառի անորոշ ունի է, ի, ա: Գրաբարի խոնարհման հարացուցում հանդիս եկող ի խոնարհիչը բարբառում առկա է նաև անորոշում: Այսպես՝ դրբ.՝ խօսելի-խօսիմ, նայելի-նայիմ, բրբռ.՝ խօսելի-խօսիս, ննիլի-ննիս⁴⁵: Հաճախ անորոշում ի-ով են հանդիս դալիս գրաբարի նաև և խոնարհման բայերը. ասնիլ, հասնիլ հայերի: Հնեղաներպան է, ի լծորդությունների բաշխման ոլորտները խիստ անբովանդակ լին և հաճախ մեկը փոխարինվում է մյուսով: Անորոշում հակուձք մեծ է զեկի ի լծորդությունը:

Բարբառային կազմության և փոխառյալ հիմքերով բայերի անորոշում լծող ձայնավորների հանդիս են գալիս ըստ սեռային պատկանելություն. ներգործական սեռի բայերը հանդիս են գալիս է (խըբղէլ, ծագողէլ), չեզոք սեռի բայերը՝ ի և ա լծորդություններով (կարմրողգիլ,

⁴³ Ըստ եզանակային ձևերի մասնակցության դերբայների աշգրտի (բուն և կսիսյալ) խմբավորում է կատարել Ս. Արքանամյանը (Նշվ. աշխ., էջ 154):

⁴⁴ Ակառի չեք առնում ա լծորդությունը, որով հանդիս էր գալիս միայն զով բայը:

⁴⁵ Բնված է բարբառի 2-րդ զնքը, որովհետև թէ՛ և թէ՛ ի լծորդությունների գեղբում սեղայիններից առաջ բարբառն ունի ի:

բըրբողլի)։ Բատ այսմ էլ դրանք բաշխվում են համապատասխան խոնարհման տիպերի միջև։

Բարբառը շունի ու լծորդությանը բայեր, եթե շնաշղենք քոզուլ միակ բայը, որը գոյություն ունի մի շարք բարբառներում։

Գրաբարի նկատմամբ մի շարք բայեր անորոշ ձևում տարբերություններ են կրեան հանում բայահմբի կառուցվածքի տեսակետից։

Այդպիսի անանցավոր ձևի դիմաց առկա է պարզ հիմք, զարկանել > գորգիլ > զարկել, սկսանել > ըկկրիլ, անկանել > ինալ, լուանալ > վրլալ։

Բ) Հակառակը՝ պարզ հիմքի դիմաց բարբառն ունի անանցավոր ձև, պատկանել > պատվրնալ, կտեել > կրեել, քնել > քնեցնալ, դեանել > կիկուեալ, կուլ > կկեալ, կարտանել > կարտուալ, իշխել > իշխրեալ։

Անորոշ գերբայը, ինչպես օրոհարում, չի մասնակցում բայի եղանակային ձևերի կազմությանը։ Այն շարահյուսական մակարդակում հանդիս է զուլով գոյականաբար հոլովվում է՝ սեռական-տրականում ստանալով գոլ (ն) հոլովակիրտը։ Ի լծորդը բերված ձևերում գտնուում է է. խոսիլ-խոսուելու-խոսելի-խոսելով։

Անորոշ գերբայի շարահյուսական իրացումներն են՝ ենթակա, հատկացուցիչ, խնդիր, պարագա, վերադիր, Մարթու էղջվանց խօրաբելը չի-րա-բան չէ (ենթակա)։ Տիրապիտ զուեւ ձրլէլուս բլա սիպարը գր-րինգիս կրեանց էղջվեն (ժամանակի պարագա)։ Կրագին քով էրգա մը-նալուն էրէօք գարմըրգղէցավ (պատճառի պարագա)։ Հանդիսանող գր-րօթլ բան մը բւլլու համար (նպատակի պարագա)։ Փալէլով դէլօ դէղ գացինք (ձևի պարագա)։

Վ ա զ ա կ ա տ ա ռ դ ե բ բ ա յ : Գրաբարի անցյալ գերբայի նալ վերջավորությանը համապատասխանում է -ւր, որը բաղադրվելով բայահմբերին՝ կազմում է վաղակատարի իմաստ արտահայտող գերբայաձև։

Վաղակատար գերբայը շունի անկախ կիրառություն, նամիշտ հանդես է գալիս օժանդակ բայի ներկա և անցյալ ձևերի հետ հարադրված՝ կազմելով սահմանական եղանակի վաղակատար և անցյալի վաղակատար ժամանակներ, ալսէր իմ, նրստէր իմ, հասկըցէր իմ։

Հ ա ր ա կ ա տ ա ռ դ ե բ բ ա յ : Կազմվում է -ամ վերջավորությամբ, որը բատ լծորդությունների և բայերի կազմության (անանցավոր և անանցավոր) զրվում է ներկայի կամ անցյալի հիմքի վրա։

Հարակատար գերբայի մասնակցությունը բայի եղանակային ձևերի կազմությանը շունի յուրահատկություն, այս գերբայով է օժանդակ բա-

յի ներկա և անց, ժամանակների հարադրությամբ ձևավորված ժամ, ազատորեն արտահայտում է արդի հայերենի վաղակատար ժամ, իմաստ, ինչպես՝ Հրահրտութիւն աշխար բըրնամ էր (Նրանց բրբէլը աշխարհ էր բռնել)։ Ճիգիս էղեվը ուս մը էլամ է (Վզիս ետեր ուսուցը է կելի)։

Եթե հիշյալ բայաձևը չի արտահայտում վաղակատար ժամ, իմաստ, ապա այն ավելի ճիշտ վիճակային, բան ժամանակային հարաբերություն է մատնանշում, Հազմիթը զարբողամ է (Ձուս կտորված է)։ Սաղ է, բի մէլամ (Ողջ է, թե մեռած)։ Մաթիգը որդցամ է (Մաթիգը գեղեցկացած է)։

Ավելին, հարակատար գերբայը իր շարահյուսական կիրառությամբ ավելի հաճախ հանդես է գալիս որպես որոշիչ, բան օժանդակ բայի հարադրությամբ՝ որպես ստորոգյալ, ժըմնամ (հասունացած) զըլա, հավկամ ախլիկ, տարգած հավգիր։

Որ հարակատար ձևն ունի հիմնականում անվանական արժեք, բան կախյալ գերբայական, երևում է նրա ժխտական կիրառություններում։ Հակառակ եղանակային ձևերին մասնակցող գերբայների (վաղակատար, ժխտման, որոնք ժխտական ձևերի էզ, Յ-թղ դեմքում հարադրվում են օժանդակ բայի շիլը ձևերի հետ, հարակատարը նույն պարագայում հանդես է գալիս չէ տարբերակի հետ, ինչպես դա տեղի է ունենում անվանական ստորոգյալների դեպքում, չի մէլուր, չի մէլեհիր, բայց՝ չէ մէլամ)։

Հարակատար գերբայը փոխանուն կիրառությամբ ստանում է հոգ, ի(ն) հոլովակիրտ և հոգնակերտներ՝ շարահյուսական մակարդակում դուռնալով նախադասության զանազան անդամներ, Անցածը մօռցուց զըլալ (ենթակա)։ Էղամ ճամփուղ մաղաղ ըլլամ (որոշիչ)։ Քօղ, օ մէկք ա գիտցազնես անիքք (ուղիղ խնդիր)։ Մարթը սաղը սօլը (աչը ձախը) չի նաիր, հասանին զուղա մէրքի զօրալով (հանդման խնդիր)։ Մէղէն օտակի էլավ ու հէրօղամ հէրօցավ (ձևի պարագա)։ Չար ասիքի դազ ձընամ է (ստորոգյալ)։

Ե ն ք ա կ ա յ ա կ ա ն գ ե բ բ ա յ : Վերջավորությունն է -օղ, որը բատ լծորդությունների և բայերի կազմության զրվում է ներկայի կամ անց, հիմքի վրա, ինչպես՝ խրմօղ, ծէնօղ, ուլօղ, հասնօղ, սօրվօղ, հասկըցնօղ, բայց՝ կարբըցօղ, ախցօղ, մընցօղ, հասկըցօղ, հօղրղացօղ, կիտցօղ։

Մտրալ և գտրալ բայերը, հակառակ և լծորգութիւն բայերին հաստի օրինակաբարձութիւն, վաղակատար են կազմում ներկայի հիմքից՝ մտրօղ, կտրօղ, առաջինը գալիս է դեռևս զրաբարբան շրջանից, նրկրորդն ստացել է մտրալ բայի համարանութիւնը՝ նրա հետ անբաժան գործածվելու պատճառով:

Ենթակայական դերբայը չի մասնակցում բայի եղանակային ձևերի կազմութիւնը: Ետրահայտական մակարդակում նրա իրացումներն են՝ ենթակա, որոշիչ, հակակացուցիչ, խնդիր, վերադիր: Ախշիզ չի ձևօժըր ձուկը գրծվէ (ենթակայ): Զուղօղի են մալը ուղօղին հայու (հակակացուցիչ և հանգման խնդիր): Էփ ու թագի կիսցօղ զին է (որոշիչ):

Փխտմաւ և գերբայ: Բոլոր բայերի համար կազմվում է անորոշ ձևից՝ բառավորի լի հերթագայութիւնը. վազէ-վազէր, խօսիլ-խօսիր, փախնիլ-փախնիր, տէնսիլ-տէնսիր, աղալ-աղար:

Գրաբարում բայական սառ հանդես է գալիս հրամայականի արդիական տարբերակի եզ. թվում՝ մի՛ հասաներ, մի՛ խօսիր, մի՛ վազեր, մի՛ աղար: Բարբառը պահպանելով այդ բայաձևի նշված կիրառութիւնը, միաժամանակ ընդարձակել է նրա գործառնութիւնն ոլորտը՝ այդ բայաձևի և օժանդակ բայի ժխտական ձևերի հարադրութիւնը կազմելով սահմ. ներկա և անկատար ժամանակների ժխտման հարացուցեհար: Քանի որ նշված բայաձևը բոլոր դիմերիի համար հանդես է գալիս անփոփոխ, ուստի այն ձևեր է բերել զերբայն արժեր:

Է լծորգով պարզ բայերի վաղակատար և ժխտման դերբայների միջև առաջանում է համանունութիւն (լիսլը՝ և՛ վաղակատար է, և՛ ժխտման), որը, սակայն, խոսքային մակարդակում շփոթի տեղիք չի տալիս:

Քերբայկցալկան գերբայ: Այս դերբայն անեղծվում է անորոշից՝ և՛ վերջավորութիւն հավելումով և ձևով նույնանալով բացառական հոլովաձևի հետ, վերջինիցս տարբերվում է իմաստային յուրահաստկութիւնը: Նրանով արտահայտվում է հիմնական գործողութիւնը հարակից գործողութիւն կատարելու իմաստ. Ուղիղն զբրալը: Ձեանիմաստային ինքնուրույնութիւնն պատճառով հիշյալ բայաձևերը ստացել են անկախ դերբայի արժերը⁴⁶: նախադասութիւն մեջ ընթացակցական դերբայը լինում է ձևի պարագա:

Բացի կանոնավոր ու օրինաչափ գործածութիւն ունեցող նշված դերբայներից, բարբառում հանդիպում են՝ ուլ-ով վերջավորող դեր-

բայներ՝ կայնով, մօցուով, բընով, պաղուով: Մահմանափակ գործածութիւնն պատճառով այդ դերբայաձևը բարբառում որակ չի կազմում, և նրա անկախութիւնը բացատրվում է սակայ այլ բարբառների ազդեցութիւնը՝ ժողովրդական բանահայտութիւնն միշտով, որից և թագանցել է առօրյա խոսակցական որոշ դարձվածքների մեջ. Անցանը մօցուով բլլա: ձագաղաղիր շագղին վրա գրուով է: Ըս պուպուր գօտուով է (կտրբված է):

Փոխանցումներ լծորգութիւնների միջև: Բարբառի բայերը միշտ չէ, որ լծորգութիւններով համընկնում են գրաբարի համապատասխան բայերի հետ: Ու լծորգութիւնն բոլոր բայերը. բացի թողուլ>բողուլ բայից, բաշխված են տարբեր լծորգութիւնների միջև. առնուով>առնելի, կրկնուով>կրկնելու, զարթնուլ-արթննալ-գրտնուով>ըսպօնելի, կրկնուով>կրկնել, լեուլ>լեցնել, արգելուով>արհիլել, թքնուով>ըրհնել: Այստեղ առկա են լծորգութիւնների ու/ա, ու/ի, ու/է փոխանցումներ:

Զգալի թիվ են կազմում նաև լծորգութիւնների ե/ա փոխանցումը բայերը. իջանել>իջնալ, մտանել>մըտնալ, տեսանել>տէննալ, ելանել>կլլալ, ամաշել>ամըշնալ, ճանաշել>ճաշնալ, իշանել>իշնիրնալ:

Հայտնի է, որ գրաբարում խոնարհման հարացույցում ի խոնարհելով հանդես եկող բայերը անորոշում ունեցել են և լծորգութիւնն: Բարբառում այս խմբի բայերը ի-ն պահպանում են նաև անորոշում, որով առաջացել է ե/ի փոխանցումը. խօսել>խօսիլ, նայել>նայիլ, թռչել>ըրշիլ, փախել>փախիլ, փախնիլ>փախնիր: Անորոշում ի-ով են հանդես գալիս նաև գրաբարի և խոնարհման հասնել, հատանել բայերը՝ հասնիլ, հաղնիլ:

Հիմնականում անփոփոխ է և լծորգութիւնը:

Գիմավոր ձևեր

Գեմմի և բվի կարգերը: Ողջ հայերենի նման նրգիկայի բարբառում եւ բաշի դեմքի (1-ին, 2-րդ, 3-րդ) և թիի (եզակի, հոգնակի) իմաստներն արտահայտվում են միեւնույն դիմաբվականից ցուցիչների միջոցով: Դրանց մեջ ընդհանուր ձևով առկա է նաև ժամանակի կարգը:

Գրաբարի համեմատութիւնը օժանդակ բայը կրկնել է հետևյալ փոփոխութիւնները. նախ՝ այստեղ բացակայում է օժանդակ բայի ապ. ժամանակաձևը (ինչպես ետգրաբարյան շրջանի հայերենի բոլոր դրսեվորումներում), իսկ ներկա և անց. ժամանակաձևերի համապատասխանութիւններն ունեն հետևյալ պատկերը.

⁴⁶ Տե՛ս է. Ալալյան, Մեղրու բարբառը, էջ 196: Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայերը և նրանց ձևաբանական նշանակութիւնը, Երևան, 1953, էջ 262—266.

Ն երկա

գրաբար	բարբառ
հմ եմք	իմ ինք
ես էք	էս էք
է են	է են
Ա ն ց յ ա լ	
էի էաք	էի էանք
էիր էիք	էիր էիք
էր էին	էր էին

Ներկա ժամ. եզ, թվի 1-ին դմբի և հոգն. թվի 1-ին և 3-րդ դմբեր-
բի ե >ի փոփոխությունը, որ հատուկ է շատ բարբառների, բացա-
ռարվում է ե-ի դիրքով, իբրև ռեզյուսիոններից առաջ կատարված հնչյու-
նափոխություն⁴⁷: Հոգ. 1-ին դմբի մ-ի դիմաց առկա ե-ն մե՛նք գերան-
վան առնամանությունը է⁴⁸: Վերջինիս համարանությունը է մեկնվում
անց. ժամ. էանք ձևում առկա ե-ն⁴⁹:

Սամառիկ բառի վերջավորությունները համընկնում են դիմային
վերջավորությունների հետ: Վերջիններս համապատասխան լծորդ ձայ-
նավորների հետ հանդիս են գալիս համադրական ձևերում և կատարում
են նույն դիմաթվանիչ ցուցիչի դերը, ինչպես ի լծորդության դեպքում՝
իմ, իս, ի, ինք, իք, ին (ներստիմ, ներստիս, ներստի...), և լծորդության
դեպքում՝ ամ, աս, ա, աք, աք, աք (հաղամ, հաղաս, հաղա...):

Անցյալի ձևերում է և ի լծորդության բայերի վերջավորությունները
նույնն են՝ էի, էիր, էր, էանք, էիք, էին. և լծորդության բայերը, գրաբար
նման, հանդիս են գալիս իրենց լծորդ ձայնավորով՝ աի, աիր, աք, ա-
յանք, աիք, աին (աղաի, աղաիր, աղաք, աղայանք, աղաիք, աղաին):

Գրաբարի համանաությունը բարբառի դիմաթվանիչ ցուցիչները
արտահայտում են հետևյալ հակադրությունները.

գրաբար	բարբառ
1- ին դ. մ/մք, Յ/յք	մ/նք, Յ/նք
2-րդ դ. ս/չք, բ/բ, հ/բ/ք, բ/չք	ս/թ, բ/թ
3-րդ դ. յ/ն, լր/ն, Յ/ն, լն	Յ/ն, լր/ն, վ/ն

47 Հ. Անտոյան, Իրակատար քերականություն, հ. 4, գ. 2
48 Նույն աղբյուր:
49 Նույն աղբյուր:

Գրաբարի եզ. և հոգ. թվերի 2-րդ և 3-րդ դմբերում առկա յ-ն, որը
հանդիս է գալիս այն օրենքի համաձայն, բայտ օրի գրաբարում վանկը
չէր կարող ավարտվել ձայնավորով, բարբառում բնկել է, որով և պար-
զեցվել են դիմաթվանիչ հակադրությունները:

Հակառակ գրաբարի, ուր բաղմարժեք էր Բ-ն (ինքնուրույնաբար
այն հոգ. թվի ն՝ 1-ին, և՛ 2-րդ դմբի ցուցիչ է), բարբառում այդ-
պիսի արժեք ունի Բ-ն (այն եզ. թվի և՛ 2-րդ, և՛ 3-րդ դմբի ցու-
ցիչ է)⁵⁰:

Մյուս դեպքերում գրաբարի և բարբառի դիմաթվանիչ ցուցիչները
համընկնում են:

Հրամ. եզ. դիմաթվանի (միայն 2-րդ դմբ) հակադրության գրա-
բարի տիպերը՝ Յ/Ա՛՛Բ, Ե՛ն/ա՛ն՛Բ, ա՛ն/ա՛ն, Բ՛ն/Բ, Բ՛ն/Բ⁵¹ (ինչպես թո՛ղ-թո-
ղ՛ք, սիրո՛ւ-սիրեց՛ք, աղա՛-աղաց՛ք, մի՛ գրե՛ր-մի՛ գրէ՛ր, հասո՛-
հասուց՛ք) բարբառում պահպանված են, միայն Ե՛ն/ա՛ն՛Բ-ի փոխարեն
առկա է Ե՛ն/ա՛ն, ինչպես՝ սիր՛ւ-սիրեց՛ի՛:

Ա՛ն/Բ հակադրությունը, որը գրաբարում սևեթ համակարգային ար-
ժեք, բանի որ նրանով ստեղծվում էր պատճառական բայերի հրամայա-
կանի դիմաթվանի հակադրություն, բարբառում գործում է միայն գալ >
կալ բառում՝ էզո՛-էզի՛: Իսկ պատճառականների համար ստեղծված է
նոր հակադրություն՝ ս՛ւր/ա՛ն. փախցա՛ն/իխսցազ՛ի՛:

Ժ ա մ և ն ա կ ի կ ա ր գ ր: Միայն այն. ժամանակն է, որ ունի ինք-
նուրույն ձևաբանական արտահայտություն, որով և ստեղծվում է անց-
յալայնությունը՝ անցյալայնություն⁵² իմաստային հակադրություն: Անց-
յալայնությունը մասնավորվում է անց. անկատար, անցյալի ապառնի,
անցյալի վաղապարի և անցյալ կատարյալ ժամանակակետերում: Ա-
ռաչին Լերբի անցյալի ցուցիչները նույնն են բոլոր տիպի բայերի հա-
մար՝ լրս-ի, լստ-ի, աղա-ի, պա՛րկ-ի, լրնէ-ի, մոզէնա-ի... իսկ և
լծորդության պարզ, է լծորդության պարզ և ամանցավոր, բաղմարայա-
կական ամանցով ներգործական սեռի և պատճառական ամանցով բայե-

50 Գրաբարում Բ-ն, բացի անկախ դիմաթվանիչ վերջավորություն լինելուց, հան-
գիս է գալիս նաև յ-ի և ե-ի հետ զուգորդությունով, ե-ն այս դեպքում լուրի լծորդ ար-
ժեք (հմտ. գրի, աղալ-անց, կատ. գրեցր, աղալիր):

51 Բացառում ենք հրամայականի կրավորակն իտալերձան ալեյնայ ցուցիչները,
ինչպես՝ ի՛ր/ի՛Բ, Յ/ա՛ն՛Բ, ա՛ն՛Բ, ի՛ր/ա՛ն՛Բ, ա՛ն՛Բ, ի՛ր/ալա՛ն՛Բ, ա՛ն՛Բ, ջի՛ր/ջի՛Բ, որոնցում
դիմաթվանի հակադրությունը արտահայտվում է միայն ր/կ վերջավորություններով, իսկ
մյուս ցուցիչները կրավորական իմաստակիրներ են:

52 Գ. Զանոյան, Էջ. աշխ., էջ 260:

րի անցյալ կատարյալի ցուցիչները թեև հիմնականում համընկնում են առաջինների հետ՝ աղաց-ի, լրսւց-ի, պաւ-ի, պատօղւց-ի, ճասկը-ցուց-ի, բայց ծագումնաբանորեն դրանք նույնը չեն, այլ միմյանց հետ կազմում են համանուններ, Խ լծորդութիան, (ա, է, ր) Ն, չ և վ փանցնե-րով բայերի անց. կատարյալը հանդես է բերում այլ ցուցիչներ՝ խօսւց-ա, աւա-ա, բըռ-ա, շարժվւց-ա... (ա, աբ, ալ, աճ, աբ, աճ):

Գրաբարի համեմատութիամբ անց. ժամ. ձևաբանական ցուցիչները բարբառում ունեն հետևյալ արտահայտությունը.

գրաբար	բարբառ
-ի -աք (խօսէի խօսէաք)	-ի -անք (խօսէի խօսէանք)
-իր -իք (խօսէիր խօսէիրք)	-իր -իք (խօսէիր խօսէիրք)
-յր -ին (խօսէր խօսէին)	-ր -ին (խօսէր խօսէին)
-ի -աք (մնացի մնացաք)	-ի -ինք (մընացի մընացինք)
-եր էք, իք (մնացեր մնացէր)	-իր -իք (մընացիր մընացիրք)
Շ-ին (մնաց մնացին)	Շ-ին (մընաց մընացին)
-ալ -աք (փախալ փախաք)	-ա -անք (փախա փախանք)
-ար -արք (փախար փախարք)	-ար -աք (փախար փախարք)
-աւ -ան (փախաւ փախան)	-աւ-ան (փախաւ փախան)

Ինչպես երևում է, անց. ցուցիչները գրաբարում և բարբառում հիմնականում նույնն են: Գրանք են՝ ի, ա, բ, ը > վ, որոնք պայմանականորեն կարելի է առանձնացնել դեմքի և թվի ցուցիչներից իբրև զուտ անցյալի ցուցիչներ:

Անց. կատարյալի եզ. 2-րդ զեմքի -եր-ի դիմաց բարբառում առկա իր-ը և հոգ. 1-ին զեմքի -ա-ի դիմաց զոյություն ունեցող ի-ն պետք է բացատրել մյուս զեմքերի ի-ի համաբանությամբ, որով, ինչպես նաև հոգ. 2-րդ զեմքի -էլ, -իք գոյական ձևերի դիմաց միայն իք ձևի գործածությամբ, բարբառում միասնականացել է այդ ժամանակի ձևաբանական արտահայտությունը:

Գրաբարի և լծորդության ածանցավոր բայերի ներգործածել խոնարհման եզ. 3-րդ զեմքի արտահայտան հիմքի, այսինքն՝ ժամանակադիմաբանիչ Շ ցուցչի զիմաց բարբառար հանդես է բերում -ալ փերջավորություն՝ խած-խածալ, զարկ-զարկալ, էլ-իծալ, հմուտ-մղղալ: էհա-հասալ:

Ոչ անցյալյանության եզրի ներկա ժամանակը հայերենի ոչ մի գրականում չունի ձևաբանական հատուկ ցուցիչ, նրա իմաստն ար-

տահայտվում է դիմաբովային վերջավորությունների միջոցով: Այսպես, մ-ն, ինչպես գրաբարում, այնպես էլ բարբառում կ' 1-ին զեմքի, կ' եզ. թվի, կ' ներկա ժամ. իմաստակիր է: Սակայն բարբառում դիմաբովային վերջավորությունները միշտ չեն, որ բավարար են ներկա ժամանակի իմաստի արտահայտման համար: Հենց բուն ներկայի համար կիրառվում է կը նախամասնիկը, որը թեև առաջացել է որպես եղանակակիր⁵³, բայց հենց դրանով է բնութագրվում ներկա ժամանակը:

Ոչ անցյալյանության եզրի մյուս ժամանակը՝ ապառնի, գրաբարում հանդես է գալիս 1-ին ապ. և 2-րդ ապ. տարբերակներով: Սրանք իրենց -ից և -այց, -ցէտ, -ցէ, -չուլ, -չիլ, -ցնե (իսկ ավելի անկախ՝ -ց և -չ) ձևաբանական ցուցիչներով ետզբաբարյան շրջանում գրուս են մեծում համակարգային գործառնմից: Ապ. ժամ. իմաստի արտահայտման համար ստեղծվում են նոր միջոցներ, որոնք հայերենի հետագա դրսևորումներում չեն բնութագրվում զուտ ձևաբանական արժեքով: Երզնկայի բարբառում ապառնիության իմաստը արտահայտվում է պիղի||պիտ||պի||պ անխամասնիկով, որը միաժամանակ եղանակակիր է:

Հրամ. եզ. ժամանակածը, որն իր բնույթով կ' ներկա է, կ' ապառնի, իր այդ կարգի արտահայտման ինքնուրույն ցուցիչ չունի. դիմաբովային վերջավորությունները միաժամանակ ժամանակի իմաստակիրներ են:

Ե Ղ Ա Ճ Ա Կ Ի Կ Ա Բ Գ Ը: Բարբառում, ինչպես գրաբարում, խոնարհումը կատարվում է երեք եղանակով՝ սահմանական, ըզգական (զբ.՝ ստորագրական) և հրամայական: Սրանց ձևաբանական հակադրությունը, ի տարբերություն գրաբարի, ուր այն արտահայտվում է վերջավորությունների տարբերությունների միջոցով, բարբառում հիմնականում բնութագրվում է նախամասնիկների առկայություն-բացակայություն հատկանիշով:

Ե և պի նախամասնիկներով, որոնցից առաջինը կազմում է ներկա և անկատար, իսկ երկրորդը՝ ապ. և անց. ապ. ժամանակածը, սահմ. հակադրվում է ըզգ. և հրամ. եղանակներին: Խոնարհման վերջածական ձևերի առկայություն-բացակայություն հատկանիշը ևս բնութագրական է եղանակների հակադրության համար: Ըստ որում, ըզգ. և հրամ. աչդպիսի ձևերի բացակայությամբ հակադրվում են սահմանականին, որի վազակատար ներկա և անց. հարակատար ներկա և անց.

53 Տե՛ս 2. Անտոյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, էջ 433:

ձևերը ունեն խոնարհման վերլուծական կառույց: Սահմանականի միակ պարզ ձևը՝ անցյալ կատարյալը, բղձականին և հրամայականին, ինչպես նաև վերբիեներս իբար հակադրվում են վերջավորությունների աստիճանայինը:

Սահմ. եղ. կր-ով և պի-ով ձևերին հասուց է բաղմիմաստություն. կր-ով ձևերը, բացի ներկայի իմաստից, արտահայտում են նաև սահմ. և պայմ. եղանակների ապանիի իմաստ: Պի-ով ձևերը, սահմ. ապանիից դատ, երկրորդաբար արտահայտում են հարկադրական եղ. իմաստ:

Խոնարհում

Բարբառի բայական համակարգին բնորոշ է խոնարհման համադրական տիպը՝ նման գրաբարին: Միայն վաղապատար և հարակատար ժամանակներն են, որ ունեն խոնարհման վերլուծական տիպ: Մի քանի համադրական ձևեր ուղեկցվում են նախածաննիկներով: Այդպիսիք են սահմ. եղ. ներկա և անկատար, ապ. և անց. ապ. ժամանակները: Առաջինները հանդես են գալիս կր||կ|լու, երկրորդները՝ պի||պի||պ նախածաննիկներով: Ինչպես արդեն ասվել է, կր||կ|լու-ով ձևերը երկրորդաբար արտահայտում են նույն եղանակի ապանիի և պայմանական եղանակի ապանիի իմաստներ, իսկ պի||պի||պ ձևերը՝ նաև հարկադրական եղ. ժամանակավանկի իմաստներ: Այս իմաստների արտահայտումը հիմնականում պայմանավորված է շարահյուսական գործոններով, որի պատճառով էլ շնեք սալիս կր-ով և պի-ով ձևերի պայմանական և հարկադրական եղանակների ձևաբանական հարացույցներ:

Բարբառում խոնարհումն իրականացվում է երեք խոնարհչիով՝ է, ի, ա: Դրանց հանդես գալու պայմանները հիմնականում բացատրվում են պատմական գործոնով. գրաբարում այս կամ այն խոնարհչիով հանդես կկող բայը նույն խոնարհչին է օտանում նաև բարբառում. վաղես, վազէ>վազև, վազէ, նստիս, նստի>նստիս, նստի, աղաս, աղա>աղաս, աղա (իհարկե, այստեղ պետք է նկատի ունենալ լծորդությունների փոփոխությունների պատճառով առաջացած խոնարհչների փոփոխությունը, ինչպես՝ իբանեի>իբնալ): Սակայն նորակազմ բայերը (բարբառային և փոխառյալ հիմքերով) է, ի, ա խոնարհչներին չուրաքանչյուրի հետ զուգորդվում են բառ սեռային պատկանելության: Գրաբարի ներգործածել և կրավորածել խոնարհման վերջավորությունները բարբառում բաղմիմաստ են հետևյալ կերպ.

ա) ե>է խոնարհման պարզ բայերը, անկախ սեռային պատկանել-

յությունից, ստանում են ներգործածել վերջավորություններ՝ սիբեցի, վազեցի:

բ) ի>ի խոնարհման պարզ բայերը ստանում են կրավորածել վերջավորություններ՝ առանց կրավորական իմաստի՝ նաեցա, բերունցա:

գ) Ա>ա խոնարհման պարզ բայերը հանդես են գալիս ներգործածել վերջավորություններով՝ հազացի, խրնդացի:

դ) Բոլոր ածանցավոր բայերը ստանում են կրավորածել կամ խառ խոնարհման վերջավորություններ՝ հասա..., մըղա..., հասկըցա... խա-նի, խանի, խանավ:

ե) -լ ածանցով բայերը անկախ սեռային պատկանելությունից (կրավորական, թե չեղոր) ստանում են կրավորածել վերջավորություններ՝ բազվեցա, կըզզվեցա:

զ) Պատճառական ածանցով բայերը հանդես են գալիս ներգործածել վերջավորություններով՝ բրցուցի, սուզվեցուցի:

է) է, ի, ա խոնարհման պարզ բայերը հրամայականի եղակի թվում գոտորդվում են ներգործածել վերջավորություններին՝ վազէ, խուէ, մը-նա՛, իսկ ածանցավոր բայերը՝ կրավորածել վերջավորություններին՝ առանց կրավորական իմաստ հաղորդելու՝ կըի՛ր, հասի՛ր, բրի՛ր, կօխ-ցի՛ր:

ը) Հրամայականի հոգ. թվում առկա է միայն գրաբարի ներգործածել վերջավորությունը՝ վազեցէ՛ք, խուեցէ՛ք, մընացէ՛ք, կըղէ՛ք, բը-ռէ՛ք, հասլէ՛ք, կօխցէ՛ք:

թ) Հրամայականի արդիական տարբերակում է, ա խոնարհման բայերը ունեն ներգործածել վերջավորություններ, իսկ ի խոնարհման բայերը՝ կրավորածել վերջավորություններ առանց կրավորական իմաստի՝ մի՛ վազէ, մի՛ վազվ, մի՛ մողէնա, մի՛ մողեմա, մի՛ նըստի, մի՛ նըստի:

ժ) Մի խումբ բայեր, գրաբարի նման, ստանում են Ա՛ ներգործածել և՛ կրավորածել վերջավորություններ՝ համապատասխան սեռային իմաստների հաղորդումով: Դրանք են՝

ներգործածել վերջ.		կրավորածել վերջ.	
ներգ. սեռ		կրավ. սեռ	
ազաղէլ-ազաղի	ազաղէցի	ազաղէցա	ազաղէցա
շարծէլ-շարծի	շարծէցի	շարծէցա	շարծէցա
կըլօրէլ-կըլօրի	կըլօրէցի	կըլօրէցա	կըլօրէցա
կօռլէլ-կօռի	կօռլէցի	կօռլէցա	կօռլէցա

ծրռէլ-ծրքիլ	ծրռէցի	ծրռէց
ծրնէլ-ծրնիլ	ծրնէցի	ծրնէցա
օլլբրէլ-օլլբրիլ	օլլբրէցի	օլլբրէցա
մբրօզէլ-մբրօզիլ	մբրօզէցի	մբրօզէցա

Բարբառում խոնարհման ելակետային ձև է ըղձականը, որը ձևով համընկնում է զրարարի սահմ. ներկայից և անկատարին: Ըղձականի ձևերից համապատասխան մասնիկների հավելումով կազմվում են սահմ. եղ. ներկա և անկատար, ապառնի և անցյալի ապառնի ժամանակ-ները:

Գրական խոնարհմանը հակադրվող ժխտականը բարբառում ձևաբանորեն արտահայտվում է չի/չ և մի/մ նախամասնիկներով: Առաջինը հանդես է գալիս զրարարի ոչ-ի և չի/չ-ի փոխարեն և ունի նախդաս կիրառություն. վերլուծական ձևերում օժանդակ բայը շարադասությունը դառնում է նախդաս, որի վրա և գրվում է չի/չ-ն. չի խօսիմ, չիմ խօսիւր: Զի ստանում են բաղաձայնով, չ՝ ձայնավորով սկսվող բայաձևերը՝ չի նրստիմ, չըսիմ:

Այդ ժամանակի ժխտականում, ուր պիղի-ն սովորաբար հանդես է գալիս պի տարբերակով, չի/չ-ն գրվում է պի մասնիկի և բայի միջև. պի չի խօսիմ, պի չըսիմ:

Սահմ. եղ. ներկայի և անկատարի ժխտականը կազմվում է ոչ թև զրական ձևից չի/չ-ի հավելումով, ինչպես այդ կատարվում է մյուս ժամանակների դեպքում, ալլ ժխտման զերբայի և օժանդակ բայի ժխտման ձևերի հարադրումից՝ չիմ սիւրէր, չիմ խօսիւր, չիմ մօղէնաւ: Այս ժխտականները, սահմ. ներկայի և անկատարի զրական ձևերի նման, բազմի-մաստ են: Բացի նշված ժամանակներից, զրանք արտահայտում են նաև պայմանական եղանակի ապառնիի և անցյալի ապառնիի ժխտական իմաստներ:

Մի/մ-ն, որը զրարարի նույնիմաստ մասնիկն է, հանդես է գալիս հրամայական եղանակի արգելականի տարբերակում: Մի են ստանում թե՛ ձայնավորով, և թե՛ բաղաձայնով սկսվող բայաձևերը, իսկ մ՝ միայն ձայնավորով սկսվողները. մի՛ էթար, մէ՛թար, մի՛ խաղար:

Ստորև ներկայացնում ենք է, ի, ա լծորդություններով անածանց և անանցավոր բայերի զրական և ժխտական խոնարհումների հարացույց-ները:

	է լծորդության բայեր		
անածանց բայ	սեմէլ	Գերբայներ	անանցավոր բայ
			իսզնէլ (<խաթանէլ)
անորոշ՝	իսբմէլ		իսազնէլ
վաղակատար՝	իսբմէր		իսաձէր
հարակատար՝	իսբմօ		իսաձօ
ենթակայական՝	իսբմօղ		իսազնօղ
ժխտման՝	իսբմէր		իսազնէր
ընթացակցական՝	իսբմէլէն		իսազնէլէն
	Էղծական եղանակ		
	ապառնի		
եզակի	նօզնակի	եզակի	նօզնակի
իսբմիմ	իսբմինք	իսազնիմ	իսազնինք
իսբմէս	իսբմէք	իսազնէս	իսազնէք
իսբմէ	իսբմին	իսազնէ	իսազնին
	անցյալի ապառնի		
իսբմէի	իսբմէանք	իսազնէի	իսազնէանք
իսբմէիք	իսբմէիք	իսազնէիք	իսազնէիք
իսբմէր	իսբմէին	իսազնէր	իսազնէին
	Սանմահական եղանակ		
	ներկա		
կրիսբմիմ	կրիսբմինք	կրիսազնիմ	կրիսազնինք
կրիսբմէս	կրիսբմէք	կրիսազնէս	կրիսազնէք
կրիսբմէ	կրիսբմին	կրիսազնէ	կրիսազնին
	անցյալի անկատար		
կրիսբմէի	կրիսբմէանք	կրիսազնէի	կրիսազնէանք
կրիսբմէիք	կրիսբմէիք	կրիսազնէիք	կրիսազնէիք
կրիսբմէր	կրիսբմէին	կրիսազնէր	կրիսազնէին
	ապառնի		
պի իսբմիմ	պի իսբմինք	պի իսազնիմ	պի իսազնինք
պի իսբմէս	պի իսբմէք	պի իսազնէս	պի իսազնէք
պի իսբմէ	պի իսբմին	պի իսազնէ	պի իսազնին

անցյալի ապառնի

պի խըմէի	պի խըմէանք	պի խազնէի	պի խազնէանք
պի խըմէիր	պի խըմէիրք	պի խազնէիր	պի խազնէիրք
պի խըմէր	պի խըմէին	պի խազնէր	պի խազնէին

վաղակատար

խըմէր իմ	խըմէր ինք	խաձէր իմ	խաձէր ինք
խըմէր էս	խըմէր էք	խաձէր էս	խաձէր էք
խըմէր է՛	խըմէր ին	խաձէր է՛	խաձէր ին

անցյալի վաղակատար

խըմէր էի	խըմէր էանք	խաձէր էի	խաձէր էանք
խըմէր էիր	խըմէր էիրք	խաձէր էիր	խաձէր էիրք
խըմէր էր	խըմէր էին	խաձէր էր	խաձէր էին

հարակատար

խըմձ իմ	խըմձ ինք	խաձձ իմ	խաձձ ինք
խըմձ էս	խըմձ էք	խաձձ էս	խաձձ էք
խըմձ է՛	խըմձ ին	խաձձ է՛	խաձձ ին

անցյալի հարակատար

խըմձ էի	խըմձ էանք	խաձձ էի	խաձձ էանք
խըմձ էիր	խըմձ էիրք	խաձձ էիր	խաձձ էիրք
խըմձ էր	խըմձ էին	խաձձ էր	խաձձ էին

անցյալ կատարյալ

խըմէցի	խըմէցինք	խաձի	խաձինք
խըմէցիր	խըմէցիրք	խաձիր	խաձիրք
խըմէց	խըմէցին	խաձավ	խաձին

Հրամայական եղանակ

խըմէ՛	խըմէցե՛ք
խա՛ձ	խաձե՛ք

Այսպիսի են խոնարհվում պարզ բայերից՝ լըսել, նէքէլ, ծախսել, կօ-
 նել, բալլել, խօրաթել, ծէձէլ, պըռնել, հառնել, կըլլել, վա՛ռել, կըռել, պըր-
 թել, կօնձէլ, փաղէլ, անըձէլ, հանէլ, պըլլել, շըբզէլ, կօրծիլ, ծըբէլ, վաղել, 106

մօրթել, հաստաղէլ, ծաղղէլ, ճըմըռթիկէլ, բըշէլ, մարէլ, աղաղէլ (ներ-
 դրծական սեռի իմաստով), թալլել, ըսպաննէլ, կօզէլ, ծըռէլ, փըռէլ, սիրէլ,
 սիրէլ, կանչէլ, թաղէլ, կարէլ, կըբզէլ, փընդողէլ, շափէլ, խտկէլ, համօղէլ
 և այլն, ածանցավորներից՝ առնէլ, պարնէլ, թըբնէլ, զաննէլ թըբնէլ:

Ի լծորդության բայեր

անաձանց

ննիլ (< նայիլ)

անորոշ՝
 վաղակատար՝
 հարակատար՝
 ենթակալական՝
 ժխտման՝
 ընթացակցական՝

Գերբայներ

ննիլ, հասնիլ
 ննէր, հասէր
 ննչած, հասած
 ննչօղ, հասօղ
 ննիր, հասնիր
 ննէլէն

աձանցավոր

հասնիլ (< հասնիլ)

Բղձական եղանակ

ապառնի

ննիմ	ննի՛նք	հասնիմ	հասնինք
ննիս	ննիրք	հասնիս	հասնիրք
ննի	ննին	հասնի	հասնին

անցյալի ապառնի

ննէի	ննէանք	հասնէի	հասնէանք
ննէիր	ննէիրք	հասնէիր	հասնէիրք
ննէր	ննէին	հասնէր	հասնէին

Սահմանական եղանակ

ճերկա

կըննիմ	կըննինք	կըհասնիմ	կըհասնինք
կըննիս	կըննիրք	կըհասնիս	կըհասնիրք
կըննի	կըննին	կըհասնի	կըհասնին

անցյալի աձկատար

կըննէի	կըննէանք	կըհասնէի	կըհասնէանք
կըննէիր	կըննէիրք	կըհասնէիր	կըհասնէիրք
կըննէր	կըննէին	կըհասնէր	կըհասնէին

ապառևի

պի ննիմ	պի ննինք	պի հասնիմ	պի հասնինք
պի ննիս	պի ննիք	պի հասնիս	պի հասնիք
պի ննի	պի ննին	պի հասնի	պի հասնին

անցյալի ապառևի

պի ննէի	պի ննէանք	պի հասնէի	պի հասնէանք
պի ննէիր	պի ննէիրք	պի հասնէիր	պի հասնէիրք
պի ննէր	պի ննէին	պի հասնէր	պի հասնէին

վաղակատար

ննէր իմ	ննէր ինք	հասէր իմ	հասէր ինք
ննէր էս	ննէր էք	հասէր էս	հասէր էք
ննէր է	ննէր ին	հասէր է	հասէր ին

անցյալի վաղակատար

ննէր էի	ննէր էանք	հասէր էի	հասէր էանք
ննէր էիր	ննէր էիրք	հասէր էիր	հասէր էիրք
ննէր էր	ննէր էին	հասէր էր	հասէր էին

հարակատար

ննյամ իմ	ննյամ ինք	հասամ իմ	հասամ ինք
ննյամ էս	ննյամ էք	հասամ էս	հասամ էք
ննյամ է	ննյամ ին	հասամ է	հասամ ին

անցյալի հարակատար

ննյամ էի	ննյամ էանք	հասամ էի	հասամ էանք
ննյամ էիր	ննյամ էիրք	հասամ էիր	հասամ էիրք
ննյամ էր	ննյամ էին	հասամ էր	հասամ էին

անցյալ կատարյալ

ննէցա	ննէցանք	հասա	հասանք
ննէցար	ննէցարք	հասար	հասարք
ննէցավ	ննէցան	հասար	հասանք

Հրամայական եղանակ

ննէ—ննէցէ՛ք
հասի՛ր—հաստէ՛ք

Այսպես են խոնարհում և դիրքային երկրային կազմութուն ունեն պարզ բայերից՝ խօսիլ, ծըռիլ, ծընիլ, պանիլ, ասդիլ, պըշկիլ, ազադիլ, կըռվիլ, օկնիլ (հոգնել), աբբիլ, հարցազիլ, հանիլ, մըշիլ, տէղնիլ, սէվազնիլ, կըլօրիլ, հանդըբիլ, զըզվիլ, շուլըվիլ (մազլցել), կըռիլ (կրավորական իմաստով), խափանիլ, բըրդնիլ, պակսիլ, շօքիլ, և այլն. ածանցավոր բայերից՝ չի, վ, ալօր ածանցներով բայերով՝ թըռչիլ, փախչիլ, փըլչիլ, համօզվիլ, նկզվիլ, պամըզվիլ, փըռվիլ, կըզզըվիլ, կուլվիլ (փոխադրվել), ուռէսֆօրիլ, պօխշազօրվիլ և այլն, և ածանցով բայերից՝ մէռնիլ, հադնիլ, պուսնիլ, հաքնիլ, սանիլ և այլն բոլոր ածանցավոր ու անածանց բայեր, որոնք ունեն կրավորական և շեղօք սեռի իմաստ. կարմըրդիլ, պաղըշկիլ, ճըլօրիլ (կազդորվել), մարմըրիլ, պարքըրիլ, սըքֆիլ, հաքֆիլ և այլն:

Ա լծորդության բայեր

անսածանց բայ	վըլալ (լվանալ)	սածանցավոր բայ	մօղէնալ
--------------	----------------	----------------	---------

Գերբայներ

անորոշ՝ վըլալ, մօղէնալ
վաղակատար՝ վըլացէր, մօղէցէր
հարակատար՝ վըլացած, մօղէցած
ենթակայական՝ վըլացօղ, մօղէցօղ
ժխտման՝ վըլար, մօղէնար
ընթացակցական՝ վըլալէն

Էղծական եղանակ

ապառևի

վըլամ	վըլանք	մօղէնամ	մօղէնանք
վըլաս	վըլարք	մօղէնաս	մօղէնանք
վըլա	վըլան	մօղէնա	մօղէնան

անցյալի ապառևի

վըլաի	վըլայանք	մօղէնաի	մօղէնայանք
վըլաիր	վըլաիրք	մօղէնաիր	մօղէնաիրք
վըլար	վըլաին	մօղէնար	մօղէնաին

Սահմանական եղանակ

Ենրկա

կը վըլում	կը վըլանք	կը մօղէնամ	կը մօղէնանք
կը վըլաս	կը վըլաք	կը մօղէնաս	կը մօղէնաք
կը վըլաւ	կը վըլան	կը մօղէնա	կը մօղէնան

անցյալի անկատար

կը վըլաի	կը վըլալանք	կը մօղէնաի	կը մօղէնալանք
կը վըլաիք	կը վըլաիք	կը մօղէնաիք	կը մօղէնաիք
կը վըլար	կը վըլաին	կը մօղէնար	կը մօղէնաին

ապսոնի

պի վըլամ	պի վըլանք	պի մօղէնամ	պի մօղէնանք
պի վըլաս	պի վըլաք	պի մօղէնաս	պի մօղէնաք
պի վըլաւ	պի վըլան	պի մօղէնա	պի մօղէնան

անցյալի ապսոնի

պի վըլաի	պի վըլալանք	պի մօղէնաի	պի մօղէնալանք
պի վըլաիք	պի վըլաիք	պի մօղէնաիք	պի մօղէնաիք
պի վըլար	պի վըլաին	պի մօղէնար	պի մօղէնաին

վաղակատար

վըլացեր իմ	վըլացեր ինք	մօղէցեր իմ	մօղէցեր ինք
վըլացեր էս	վըլացեր էք	մօղէցեր էս	մօղէցեր էք
վըլացեր է	վըլացեր ին	մօղէցեր է	մօղէցեր ին

անցյալի վաղակատար

վըլացեր էի	վըլացեր էանք	մօղէցեր էի	մօղէցեր էանք
վըլացեր էիր	վըլացեր էիք	մօղէցեր էիր	մօղէցեր էիք
վըլացեր էր	վըլացեր էին	մօղէցեր էր	մօղէցեր էին

հարակատար

վըլացած իմ	վըլացած ինք	մօղէցած իմ	մօղէցած ինք
վըլացած էս	վըլացած էք	մօղէցած էս	մօղէցած էք
վըլացած է	վըլացած ին	մօղէցած է	մօղէցած ին

անցյալի հարակատար

վըլացած էի	վըլացած էանք	մօղէցած էի	մօղէցած էանք
վըլացած էիր	վըլացած էիք	մօղէցած էիր	մօղէցած էիք
վըլացած էր	վըլացած էին	մօղէցած էր	մօղէցած էին

անցյալ կատարյալ

վըլացի	վըլացինք	մօղէցա	մօղէցանք
վըլացիր	վըլացիք	մօղէցար	մօղէցարք
վըլաց	վըլացին	մօղէցա՛վ	մօղէցան

Հրամայական եղանակ

վըլա՛ - վըլաց՛ք
մօղէցի՛ր - մօղէց՛ք

Այսպես են խոնարհում և դերբայների այսպիսի կազմութիւն ունեն պարզ բայերից՝ մընալ, հէվալ, համղալ, խընդալ, պօռալ, կարթալ, աղալ, ճընգալ և այլն, ածանցավոր բայերից՝ դարմանալ, հասկընալ, ճաշնալ, կիզնալ, հըվըտնալ, ուրախանալ, քընանալ, վախնալ, ցազնալ, տարնալ, տառնալ, ախմանալ, թուխնալ, իմանալ, կըրնալ, կէնալ, շաղնալ և անվանական արմատով ու հիմքածանցներով բաղադրված բոլոր բայերը:

Պատճառական բայերի խոնարհումը, ինչպես արգեն ասվել է, կատարվում է է խոնարհման պարզ բայերի նման: Ներկայացվում է խրմ-ցընէլ բայի հարացուցը:

Իերբայներ

անորոշ՝ խրմցընէլ	ենթակայական՝ խրմցընօղ
վաղակատար՝ խրմցուցըր	միտման՝ խրմցընէր
հարակատար՝ խրմցուցած	ընթացակցական՝ խրմցընէլէն

Ըղնական եղանակ

ապսոնի

խրմցընիմ	խրմցընինք
խրմցընէս	խրմցընէք
խրմցընէ	խրմցընին

անցյալի ապսոնի

խրմցընէի	խրմցընէանք
խրմցընէիր	խրմցընէիք
խրմցընէր	խրմցընէին

Սահմանական եղանակ

ճերկա

կրխրմցընիմ կրխրմցընինք
 կրխրմցընէս կրխրմցընէք
 կրխրմցընէ կրխրմցընին

ապառնի

պի խրմցընիմ պի խրմցընինք
 պի խրմցընէս պի խրմցընէք
 պի խրմցընէ պի խրմցընին

վաղակատար

խրմցուցէր իմ խրմցուցէր ինք
 խրմցուցէր էս խրմցուցէր էք
 խրմցուցէր է խրմցուցէր ին

հարակատար

խրմցուցած իմ խրմցուցած ինք
 խրմցուցած էս խրմցուցած էք
 խրմցուցած է խրմցուցած ին

անցյալ կատարյալ

խրմցուցի խրմցուցինք
 խրմցուցիր խրմցուցիք
 խրմցուց խրմցուցին

Հրամայական եղանակ

խրմց՛ուր խրմցուցէ՛ք

անցյալի անկատար
 կրխրմցընէի կրխրմցընէանք
 կրխրմցընէիր կրխրմցընէիք
 կրխրմցընէր կրխրմցընէին

անցյալի ապառնի

պի խրմցընի պի խրմցընէանք
 պի խրմցընէիր պի խրմցընէիք
 պի խրմցընէր պի խրմցընէին

անցյալի վաղակատար

խրմցուցէր էի խրմցուցէր էանք
 խրմցուցէր էիր խրմցուցէր էիք
 խրմցուցէր էր խրմցուցէր էին

անցյալի հարակատար

խրմցուցած էի խրմցուցած էանք
 խրմցուցած էիր խրմցուցած էիք
 խրմցուցած էր խրմցուցած էին

Գերբայներ՝

անորոշ՝ ազարդիւ
 վաղակատար՝ ազարդէր
 հարակատար՝ ազարդած
 ենթակայական՝ ազարդող
 ժխտման՝ ազարդիր

Ըղծական եղանակ

ապառնի

ազարդիմ ազարդիինք
 ազարդիս ազարդիք
 ազարդի ազարդին

անցյալի ապառնի

ազարդէի ազարդէանք
 ազարդէիր ազարդէիք
 ազարդէր ազարդէին

Սահմանական եղանակ

ճերկա

կազարդիմ կազարդիինք
 կազարդիս կազարդիք
 կազարդի կազարդին

անցյալի անկատար

կազարդէի կազարդէանք
 կազարդէիր կազարդէիք
 կազարդէր կազարդէին

ապառնի

պի ազարդիմ պի ազարդիինք
 պի ազարդիս պի ազարդիք
 պի ազարդի պի ազարդին

անցյալի ապառնի

պի ազարդէի պի ազարդէանք
 պի ազարդէիր պի ազարդէիք
 պի ազարդէր պի ազարդէին

վաղակատար

ազարդիր իմ ազարդիր ինք
 ազարդիր էս ազարդիր էք
 ազարդիր է ազարդիր ին

անցյալի վաղակատար

ազարդիր էի ազարդիր էանք
 ազարդիր էիր ազարդիր էիք
 ազարդիր էր ազարդիր էին

հարակատար

ազատված իմ ազարդված ինք
 ազարդված էս ազարդված էք
 ազատված է ազարդված ին

անցյալի հարակատար

ազարդված էի ազարդված էանք
 ազարդված էիր ազարդված էիք
 ազարդված էր ազարդված էին

անցյալ կատարյալ

ազարդիցա ազարդիցանք
 ազարդիցար ազարդիցաք
 ազարդիցավ ազարդիցան

Հրամայական եղանակ

ազարդի՛ ազարդիցէ՛ք

Ժխտական խոնարհում

Տրվում է միայն լրսւլ բայի հարացույցը: Մյուս լծորդութուններով, ինչպես նաև անանցավոր բայերի խոնարհման ժխտական ձևերը

ունեն համանման կազմություն՝ համապատասխան հիմքերի, վերջավորությունների, գերբայների և լծորդ ձայնավորների պահպանումով:

Գերբայներ՝

անորոշ՝ շիլբսեր
 հարակատար՝ շիլբսած
 ենթակայական՝ շիլբսոջ

Մյուս գերբայների ժխտման ձևերը գործածական չեն:

Ըզձական եղանակ

ապառնի

շիլբսիմ շիլբսինք
 շիլբսէս շիլբսէք
 շիլբսէ շիլբսին

անցյալի ապառնի

շիլբսէի շիլբսէանք
 շիլբսէիր շիլբսէիրք
 շիլբսէր շիլբսէին

Սամանական եղանակ

ենրկա

շիլմ լբսեր շինք լբսէր
 շէս լբսէր շէք լբսէր
 շիլբսեր շին լբսէր

անցյալի անկատար

շէի լբսեր շէանք լբսէր
 շէիր լբսէր շէիրք լբսէր
 շէր լբսէր շէին լբսէր

ապառնի

պի շիլբսիմ պի շիլբսինք
 պի շիլբսէս պի շիլբսէք
 պի շիլբսէ պի շիլբսին

անցյալի ապառնի

պի շիլբսէի պի շիլբսէանք
 պի շիլբսէիր պի շիլբսէիրք
 պի շիլբսէր պի շիլբսէին

վազակատար

շիլմ լբսեր շինք լբսէր
 շէս լբսէր շէք լբսէր
 շիլբսեր շին լբսէր

անցյալի վազակատար

շէի լբսեր շէանք լբսէր
 շէիր լբսէր շէիրք լբսէր
 շէր լբսէր շէին լբսէր

ծ > է խոնարհման պարզ բայերի վազակատարը և անցյալի վազակատարը ժխտականում ներկայի և անկատարի ձևերի հետ կազմում են համանուններ, իսկ բայերի մնացած տիպերի այդ ձևերում տարբերվում են, ինչպես, ներկա՝ շիմ նաիր, շիմ հաֆնիր, շիմ հասնիր, շիմ մրնաւ, շիմ հասկրնաւ, վազակատար՝ շիմ նաւր, շիմ հաֆւր, շիմ հասւր, շիմ մրնացւր, շիմ հասկրցւր:

հարակատար

շիլմ լբսած շինք լբսած
 շէս լբսած շէք լբսած
 շիլբսած շին լբսած

անցյալի հարակատար

շէի լբսած շէանք լբսած
 շէիր լբսած շէիրք լբսած
 շէր լբսած շէին լբսած

անցյալ կատարյալ

շիլբսէցի շիլբսէցինք
 շիլբսէցիր շիլբսէցիրք
 շիլբսէց շիլբսէցին

Արգելական հրամայական

միլբսեր միլբսէք

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՏԵՐ

Բայերի խոնարհման անկանոնությունը հանդես է գալիս անցյալի հիմքից կազմվող ձևերում և հատկապես անցյալ կատարյալ ժամանակում: Անկանոնությունը գրառվում է երկու եղանակով. ա) ներկա և անցյալ հիմքերում բայերի տարբարմատությունը, բ) մի տիպի բայերի անցյալ կատարյալում այլ տիպի բայերին հատուկ կազմություններով:

Առաջին խմբի մեջ մտնող բայերի անկանոնությունը բացատրվում է պատմական գործոններով և ընդգրկում է ուղէլ, էթալ, ըլլալ բայերի խումբը: Գրանք հանդես են գալիս հետևյալ հարացույցներով.

ըզծ. եզ. ուզիմ, ուզէս, ուզէ..., էթամ, էթաս, էթա..., ըլլամ, ըլլաս, ըլլա... սաշմ. եզ.՝ անց. կատ.՝ կէրա, կէրար, կէրազ..., կացի, կացիր, կընաց..., էզա, էզար, էզազ...

հրամ. եզ.՝ կէր-կէրէք, կընա-կացէք, էդիր-էդէք արգել. հրամ.՝ միլ ուղէր||մո՛ւղէր-միլ ուղէր||մո՛ւղէր, միլ էթար||մէթար-արգել. հրամ.՝ միլ էթար||մէթար, միլ ըլլար||մըլլար-միլ ըլլաք||մըլլաք գերբայներ՝ ուղէլ, ուղոջ, կէր!, կէրած, ուղէր, ուղէլէն. էթալ, կացոջ, կացէր, կացած, էթար, էթալէն, ըլլալ. աղէր, ըլլար, ըլլալէն:

Գրաբարի անկանոն բայերից բարբառում խոնարհման կանոնավոր հարացույց են կազմում լբսէլ, հանէլ, հաշնալ բայերը, որոնցից առաջինները կատարյալում հանդես են բերում է լծորդության անածանց, իսկ վերջինը՝ ա լծորդության ածանցավոր բայերին հատուկ կազմություն՝ լբսէցի, լբսցիր, լբսցե..., հանէցի, հանցիր, հանէցե..., հաշնալ, հաշնալ (ծ-ն ց-ի տարբերակն է խուլ շ-ի մոտ):

Դրան հակառակ, գրաբարի կանոնավոր խոնարհման մի շարք բա-
յեր բարբառի խոնարհման համակարգում բնութագրվում են շեղումնե-
րով: Գրաբար հիմնականում բացատրվում են լծորդությունների փոխան-
ցումներով և բայահիմքերի տարբերությամբ (ածանցավոր ձևի դիմաց
անածանց ձև կամ հակառակը):

Այլ լծորդություններից հատկապես ա լծորդության անցած բայերը
կատարյալում ստանում են իրենց նախնական լծորդությանը հատուկ
հիմքեր կամ կարելի է ասել, թե այդ բայերի կատարյալի կազմության
համար ելակետ է ոչ թե բարբառի սկզբնավոր, այլ՝ գրաբարի: Դրանելի>
իշնալ, տեսանելի>տէսնալ, մտանել>մըղնալ, էլանել>էլլալ, եղա-
նել>ըլլալ, զտանել>կըղնալ բայերը կատարյալում ունեն ոչ ցոյական
հիմք՝ ինչ(ա), տէս(ա), մըղ(ա), էլլ(ա), էղ(ա), կըղ(ա)՝ նման գրա-
բարի և լծորդության ածանցավոր բայերին և հակառակ բարբառի ա
լծորդության բայերի ցոյական հիմքի: Հիշյալ բայերը հրամայական ե-
ղանակում հանդես են գալիս հետևյալ ձևերով՝ ինչի՛ր-ինչէ՛ք, տէ՛ս-
տէսէ՛ք, մըղի՛ր-մըղէ՛ք, լէ՛լ-լէ՛լէ՛ք, էղի՛ր-էղէ՛ք, կըղի՛ր-կըղէ՛ք, որոն-
ցից եղակի թվում միայն տէ՛ս և լէ՛լ արմատական ձևերն են նույնու-
թյամբ համընկնում գրաբարի հրամայականին, մյուսները հանդես են
գալիս գրաբարի կրավորածն վերջավորությամբ առանց կրավորական
իմաստի:

Կատարյալում, հակառակ ընդհանուր կանոնի, ոչ ցոյական հիմ-
քով են հանդես գալիս նաև ըսել, պէրել բայերը՝ ըսի, պէրի:

Չարկանել, աեկանել ածանցավոր ձևերի դիմաց բարբառի գնորդել,
իևալ անածանց բայերը կատարյալում, հակառակ բարբառի օրինակա-
փության, հանդես են բերում գրաբարի ածանցավոր ձևերին բնորոշ ոչ
ցոյական հիմքեր՝ գնորդի, իևգա:

Երկրորդ խմբի մեջ մտնող մյուս անկանոնությունն արտահայտվում
է դիմաթվանիշ վերջավորությունների ոչ համակարգայնության մեջ: Մի
խումբ բայեր կատարյալի եզ. թվի 1-ին և 2-րդ դեմքերում հանդես են
բերում ներգործածն, իսկ 3-րդ դեմքում՝ կրավորածն վերջավորություն-
ների. պանալ-պացի, պացի, պացցավ, առել-առի, առի, առավ, տա-
նել-տարի, առի, տարավ, պառնալ-պարցի, պարցի, պարցավ, պե-
րել-պերի, պերի, պերավ, ըսել-ըսի, ըսի, ըսավ, աեղ-առի, առի, ա-
ռավ, գնորդել-գնորդի, գնորդի, գնորցավ, արնել-արի, արի, արավ:
Սրանց հրամայականի ձևերն են՝ պա՛ց-պացէ՛ք, ա՛ռ-առէ՛ք, տա՛ր-տա-
րէ՛ք, պա՛րց-պարցէ՛ք, պե՛ր-պերէ՛ք ըսէ՛ք-ըսէ՛ք, ըսէ՛ք-ըսէ՛ք, գնոր-գնոր-
ցէ՛ք, տր՛ար-արէ՛ք:

Որոշ բայեր դրսևորում են մեկից ավելի անկանոնություններ. դի-
մաթվանիշ վերջավորությունների ոչ համակարգայնությանը զուգահեռ
ունենում են հիմքերի անկանոնություններ (առնել, աեղ, արնել, ըսել,
պլրել, գնորդել):

Տարբեր տիպի անկանոնություն են հանդես բերում գալ>կալ,
տալ>տալ, ալ>լալ միավանկ բայերը: Գրանց խոնարհման հարա-
ցույցներն են՝

կալ

առամ. եղ., ներկա՝ կուբամ, կուբաս, կուբա... անց. կատ.՝ էգա, էգար,
էգավ...

հրամ. եղ.՝ էգօ՝ լէգօ՛ր-էգէ՛ք
արդել. տարբ.՝ մի՛ գար-մի՛ գար
դերբայներ՝ կալ, էգօղ, էգէր, էգած, կար

տալ

առամ. եղ., ներկա՝ կուզամ, կուզաս, կուզա...
անց. կատ.՝ տըվի, տըվիր, տըվավ...

հրամ. եղ.՝ տո՛ւր, տըվէ՛ք
արդել. տարբ.՝ մի՛ դար, մի՛ դար
դերբայներ՝ տալ, տըվօղ, տըվէր, տըված, տար

լալ

առամ. եղ., ներկա՝ կուլամ, կուլաս, կուլա...
անցյալ կատ.՝ լացի, լացիր, լացեց...

հրամ. եղ.՝ լա՛ց, լացէ՛ք,
արդել. տարբ.՝ մի՛ լար, մի՛ լար
դերբայներ՝ լալ, լացօղ, լացէր, լացած, լար:

Պակասավոր բայեր

Գրաբարի պակասավոր բայերից գործածվում են եմ>իմ և կալ>
կա ձևերը, իսկ անկանոններից պակասավոր են դարձել ունիմ>ունիմ
և զիտեմ>կիդիմ բայերը:

Սրանք ունեն միայն ներկա և անցյալ ժամանակներ:

իմ իմ, էս, է, ինք, էք, ին

էի, էիր, էր, էանք, էիք, էին

կա կամ, կաս, կա, կանք, կար, կան

կաի, կաիր, կար, կայանք, կաիրք, կաին

ուճիմ ունիմ, ունիս, ունի, ունիք, ունիք, ունին
ուճի, ունեիր, ուներ, ունանք, ունեք, ունին
կիրիմ կիրիմ, կիրէս, կիրէ, կիրինք, կիրէք, կիրին
կիրէի, կիրէիր, կիրէր, կիրէանք, կիրէիք, կիրէին:

Այս բայերի պակասող ժամանակները լրացվում են համապատասխանաբար ըլլալ, ունենալ, կիրկնալ բայերով:

ՄԱԿԱՐԱՅ

Փամանակի մակրայններն են՝ հիմա, այժմ (ա՜հա հիմա), պաշմ (պա՜հ քո ալ), ալ (այլեւս), նոսաշուց, օրէօր, վերջը վերջը, օր մը օրանց, օրին մէջը, օր մը, իրիցման զէմ, հիմազուհիմա, հիմաշուկ, շաղունց, արդազուց, պրզգիտաց, աղէն, վախար, թէզ, արհա (դեռ), հըլա (դեռ, սակավին), տիա(մինչև), սօնը (վերջում):

Տեղի մակրայններն են՝ հօս, հօտ, հօն, վար, վեր, ի վար, ի վեր, նէս, սուս, հէսու, էղին (ետեր), մէզդին, վերէվ, էղէվ, կուշտին, տազը, մէշը, շօրս փօօրը, աէմ զէմի, շօրս տի, ըտտին, ընդին, տար վար (դարն ի վար), տար վեր, տին(դին), մէշտէզ, աէմը, ուրգուր, աէզ, նոշէվ, յէս, քօվը, հօտտէզ, հօտտէղ, հօնդէզ:

Ձևի մակրայններն են՝ մինաշուկ, կօղզուկ, մէզէզ, նշկլարնո, ափնշկլարնո, ափալ-թափալ, պէրիսկիփալ, կըրզու-կըրզու, պարաբ զէզը, սըրզուզօզ, մէզ բերան (միաբերան), տէրնդէզօք (մանրամասնորեն), սըրզուց, մինակ, քիշ-քիշ, պէրանբաց (զարմացած), շարնաշար (ապամա), կինէ (կրկին), մէզէն, մէզէնիմէկ, կուշտիտուզ, կուշտուգուտ, կըրնգօխ, հայրի(արագ), հօնբուր-հօնբուր, պրզիզ-բրզիկ, կօղնիզօզ, կըզնէվագ, եօրէն, կամաս-կամաց, զըն (բոլորովին), սանգ-նանգ (այսպես-այնպես), խօշօր, խօռ, խօռ-խօռ, շիզգէ-շիզակ, ումբէզըս (աննը-պատակ, իղուր), պարապ-սարապ, վաշնաշար, վիրա (շարունակ), թաք (լոկ, մայն թև), զօրօվ, քահ-քահ, խբբըռ-խբբըռ, ծրվիզ-ճրվիկ, կիս-վազէս:

Չափ ու Բանակի մակրայններն են՝ քիշ մը, խէլ մը, էփէի (բավականին), քանի հէզ, հէզ մը, հէմը, մէլմը, հէլ, շատ, հատ, քանի մը, անբամ մը, հէմ զէ (ընդամենը), ըսզղէ, ըզղզէ, ընզղէ (այսպիսի, այդպիսի, այնչափ):

Կան մակրայններ, որոնք ըստ կիրառությունների արտահայտում են մեկից ավելի իմաստներ: Տրջանց ունի կ' ձևի, կ' առջի, կիճէ, Եօրէն, վիրա ունեն կ' ժամանակի, կ' ձևի իմաստներ:

Կ Ա Պ

Բարբառում զործուն շնն զբարբի նախդիրները, Ավանդաբար որոշ կապակցություններում հանդես է գալիս ի-ն' լինն ի վեր, տար ի վար (դարն ի վայր), կօղնիզօղ:

Եթե զբարբառում իշխողը կապակցի նախադաս կիրառություններն են՝ նախադրությունները, ապա բարբառում բանակային առումով ավելի մեծ թիվ են կազմում հոտարությունները:

Իսկական կապերն են՝ համար, առանց, զատ, չէտէր, շիզակ, աէօ (մինչև), կիճը (համեմատ), հագառակ, աէզ (փոխարեն), աէի (իբր), տա (մինչև), վըրա (մասին), սայայլն (շնորհիվ), զըզէ:

Անիսկական կապերն են՝ վըրա, հէտ, տազը, աէմ, մէլ, պէս, խէշը (մտաբ), քօվը, նըման, շափ:

Կապական բառերն են՝ ժամանակ, ազնև, նէս, սուս, վէրէվ, նէրբէվ:

ՇԱՂԿԱԿ

Շաղկապների մեծ մասը փոխառություններ են:

Համադասական շաղկապներն են՝ ու, ինէն (է), իլէ(է), աէ (է), համ, համ... համ, ա||ալ, հըբա||հըբը, չէ նը, յա, յա... յա, նէ'...նէ', անիսէ (մինչդէռ), իսէ (մինչդէռ), ամա||ամա||ամա:

Ստորադասական շաղկապներն են՝ օ||օր, քի(օր), նախ||նախ (հիթև), չէփ, չէփօ, շուքի, թաքի (միայն թև), սանքի (քանի որ), հինօ (որպեսզի), թէ, աէի (որպես, իբրև թև), ղօշամ (որպես թև), նը (նիթև), բնքան օ (այնքան որ), աէվօ (մինչև որ):

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ՐԱՆԵՐ

Որպես կղանակավորող բառ լայն կիրառություն ունի եր-ն, Թացի շաղկապական իմաստով կիրառությունից, եր-ն ավելի հաճախ կրանգավորում է այն նախադասությունը, որում հանդես է գալիս՝ նրան հաղորդելով զանազան զգացական վերաբերմունք: Ան զվճօ ըզ գօծին ըլլա եր, օրն ա իրինգուն զըզառնա (դժգոհություն): Ազն գուպկն նը, օ նէ-զըս խաղամ եր չըբըգուրուն մանէր (պայման): Ղըսմէրը ինէ է եր բնօվ զօն նալի'ր (զիջում):

Մյուս կղանակավորող բառերն են՝ հա, չէ, հըբա, չէ նը, ազէկ, մի բսբի'մբսեր (մինչդեռ), իշաէ, խօշ (մի'թև, չէ' որ), պէլքի (թերևս), աշէրա (արդյոք), հայրաթ (երևի), զարաբ (հավասարաբ), հիշա օր, հօ, մինակ (միայն թև), թօզ, իշ ֆօրէ, զուտ, ըհը, անբամ, պիլէ (նույնիսկ):

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Բարբառը հարուստ է ձայնարկություններով: Մարդկային յուրաբանչյուր զգացման՝ ցալի, վշտի, ուրախության, զարմանքի, ափսոսանքի, դժգոհության, արճամարհանքի և այլնի, բնածայն նրեությունների նմանություն, կենդանական աշխարհի հետ կապված վերաբերմունքի նամար բարբառն ունի գանապան զգացական ու կամային վերաբերմունք արտաստող ձայնարկություններ: Ահա ցրանց ոչ լրիվ ցանկեր՝ օ՛, է՛, ա՛յ, ա՛հ, հ՛է՛յ, հա՛յ, է՛հ, օ՛հ, հօ՛, քա՛, տէ՛, ճի՛, հայլէ՛, հա՛, վա՛յ, օ՛խ, օ՛ֆ, օ՛ֆ, մէ՛խի, ճո՛ւ-ճո՛ւ, շո՛ւ, շօ՛, շո՛ւշ, տա՛հ-տա՛հ, օ՛շ-օ՛շ, օ՛շտ, պրոէ՛, ճր՛ու-ճր՛ու, ճի՛վ-ճի՛վ, քր՛շ-քր՛շ, շր՛խի-շր՛խի՛ և այլն:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ձևարանական մակարդակում բարբառը բնութագրվում է հետևյալ հիմնական հատկանիշներով.

ա) զբարբառի -Բ հոգնակերտի դիմաց համակարգային արժեքով զործառում են -էր, -ներ մեություններ, որոնց ոլորտների բաշխումը կատարվում է ձևային հատկանիշով՝ ըստ վանկարանակության:

բ) Հոլովումն իրականացվում է -ի(ն), -ու(ն), -վա(ն), -ա(ն)ք, -օշ(ք) մասնիկավոր և -ու/ա, -ա/օ, -Բ/ց հերթադասական տիպերով: Բացարձակ իշխողը -ի(ն) մասնիկավոր տիպն է: Անկա է շուր հոլովածն հետևյալ ցուցիչներով՝ ուղղական-հայցական՝ Չ, սեռական-տրականում հանդես են գալիս մասնիկավոր և հերթադասական ցուցիչները, բացառական՝ -է(ն), -մէ(ն), -մընէ, զործիական՝ -օվ, -մօվ: Հոգնակի սեռական-տրականում հոլովման բոլոր տիպերն ստանում են -ու(ն): Հոլովները կազմվում են ուղղական-հայցականից և սեռական-տրականից: Չկա անհի և իրի առման բերանակալակ կարգ: Գրաբարի համեմատ հոլովման համակարգը պարզեցված է՝ ի դեմս նախդրների վերացման, իստը հոլովման տիպերի բացակայության, ներքին հոլովման տիպերի սահմանափակման, -ի արտաքին հոլովման առավել տարածվածության, որոշ հոլովածներում որոշյալ և անորոշ իմաստների ձևաբանական հակադրությունների շեղորացման, եզակի և, դիսլոգոսպան, հոգնակի թվի հարացույցում կայուն միտրիանկության և միասնականության առաջացման: Գրաբարի համեմատությամբ թեն առաջացել են հոլովման նոր տիպեր՝ -օշ(ք), -վա(ն), բայց սրանք իրենց կատարյալությամբ և բնույթով նույնատիպ են արտաքին թեքման մյուս հոլովումների

հետ և հոլովման ընդհանուր համակարգում շեն ստեղծում այլաձևություն:

գ) Ա, ց, ն հոգնակի հետ զործառում է ը-ն: Գրանց միջոցով արտահայտվում են որոշյալության, ստացականության և դիմորոշության ենթակարգերը: Բարբառը լուծի ցուցականության ձևարանական ենթակարգ:

դ) Ածական և թվական անունները հոլովվում են միայն փոխանուն կիրառությամբ՝ սեռական-տրականում զուգորգվելով -ի(ն) հոլովականներին:

ե) Գերանվան համակարգում առկա է որոշակի միտում դեպի գոյական անվան համակարգը: Նախ՝ հոգնակի թվում բոլոր դերանունները, բացի մէնէ, առի մներից, ունեն անվանական կազմության՝ հանձնա-օնէ, -էր, -ներ հոգնակերտների՝ աճօնէ, սըվօնէ, ինչէր, մէզայնէրը: Ապա՝ բացառական, զործիական, մեծ մասամբ նաև հայցական հոլովներում զերանունները հանդես են բերում գոյական անվան հոլովական կառույց, ինչպես՝ իմմրէ, էլզօվ, աճօնօվ, հայցական հոլովան, աճօնէ: Հոլովական համակարգի սաօրինակ բնույթով բարբառում վերացած է զբարբառի՝ ամբողջ հարացույցներով դերանվանական և անվանական հոլովման տիպերի հակադրությունը:

զ) Բայական համակարգում՝ հիմքածանցներն են՝-(ա, է, ք) և Ն: Առաջինը կենսունակ է, երկրորդն ունի սահմանափակ կիրառություն: Գրաբարի համեմատ առաջացել են սեռանիշ -վ և կերպանիշ -ողլրդ, -վըրդ, -գ, -ղգ, -գըր, -գրդ և այլն անանցներ: Վերջիններս ունեն մեծ համակարգանություն: Սեռի կարգը արտահայտության պլանում բնութագրվում է -վ անանցի ակալություն-բացակայություն (կրավորական-ներգործական), բայը -վ անանց ընդունելու-չընդունելու կարելիություն (ներգործական-չեզոք), է-ի ծարղ անլավորների (ներգործական-կրավորական), կրավորան և ներգործան վերջավորությունների հակադրություններով (կրավորական-ներգործական):

Մակայն այս ձևարանական ցուցիչներից և ոչ մեկը միանշանակ չէ, որի պատճառով էլ սեռի կարգի արտահայտումն ճշգրիտ ոլորտը շարժյուսական մակարդակն է՝ նման գրաբարին:

Գերբայներն են՝ անորոշ (լի՛ իլ՛ ալլ), վաղակատար (էր), հարակատար (ած), ենթակայական (օղ), ժխտման (էր, իր, աք) և ընթացակցական (կն), որոնցից ժամանակային ձևերի կազմության ժամանկյում են վաղակատարը, ժխտմանը, մասամբ՝ հարակատարը՝ ժամանակօրինակությամբ ցուցիչները հիմնականում համընկնում են զբարբառի հետ,

